

ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ

ՊՐԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

372
Հ-23

Գ 6 8 0. 9 0. 0 Հ Ի 0. 8 0. 7 0. 4 2 Ա Կ Թ 8 Ա Բ Ե
ՅԵՐԵՎԱՆ
1934

0120-10

ՀԱՅՀ ԼԹԱԽՈՂԻԿՈՒՄՈՒՍ. ՌԱՍՏԱՄԵՐՈՂԱԿԱՆ ԱՆՔՏԱՐ

372

Հ-23

ՎՃ

Ն Ա Խ Ա Դ Պ Ր Ո Ց Ա Կ Ա Ն

ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ

Ըստ առանձին գործութեյուրյունների

2676
1000
28/42

ՊՐԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

- Ֆիզիկական դասիարակուրյուն
- Յերաժշական-շարժողական աշխատանք
- Կերպարվես

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 3



10 JUL 2013

50. 972

Գտն. և մքաղիք՝ Մ. ՊԱՆԹՐՈՒԹՅԱՆ
Կգզվ. ի մքաղիք՝ Ա. ԱՌՍԱՄՑՅԱՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Բ Ա Յ Ա Տ Ր Ա Կ Ա Ն

1. ՖԻԶԻԿԱԾԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

Սոսոյջ վեռաբինողների համար մղվող պայքարը կոմունիստական դաստիարակության հիմնական խնդիրներից մեկն ե: Բանվոր դասակարգի գործի համար մենք պետք ե պատրաստենք ամուր, ուժեղ և տոկուն մարտիկներ — կոմունիզմ կառուցողներ: Նախադպրոցական տարիքի յերեխաների առողջացման և ֆիզիկական դաստիարակության խնդիրներն ստանում են պատասխանատու բնույթ: Նախադպրոցականը յուրահատուկ բարձր ակտիվությամբ և շարժունությամբ մտնում է սոցիալական բայն կապերի մեջ. նա մեծ քանակությամբ եներգիա յե ծախսում և հենց այդ ակտիվ սոցիալական փորձը հանդիսանում ե նրա զարգացման հիմքը: Միևնույն ժամանակ նրա ուժերը դեռևս շառսահմանափակ են, որդանիզմը դեռ շատ անկայուն է Փիզիկական ծանրաբեռնվածության ու զանազան հիվանդությունների դեմ պայքարելու համար:

Այդ պատճառով ել անհրաժեշտ ե, վոր հենց այդ հասակում յերեխայի Փիզիկական զարգացման համար ստեղծենք բարեհաջող պայմաններ, ամրացնենք և կուիենք նրա որդանիզմը, բարձրացնենք նրա տոկունությունը, համբերատարությունը, աշխատունակությունը:

Յերեխայի որդանիզմն ամրացնելով, մենք վոչ միայն նրա Փիզիկական զարգացման և աճման համար ենք բարեհաջող պայմաններ ստեղծում, այլև միաժամանակ նրա հետազա ընդհանուր զարգացման համար անհրաժեշտ նախադպրյալներն ենք ստեղծում:

Նախադպրոցական հասակում դրվում ե յերեխայի կենսական անհրաժեշտ շարժումների հիմքը, միաժամանակ ոկառւք են զար-

Տեխ. խմբագիք՝ Գ. Զենյան. Սըբագրիչ՝
Ա. Յերիցյան. Պատվեր № 2079. Հրա-
տարակ. № 2745. Գլավիտ № 8308(բ) Տի-
րաժ 2000: Հանձնված և արտադրու-
թյան և հոկտեմբերի 1933, Ստորագրված
և ապելու և նոյեմբերի 1933 թ. Գետի-
տափ ապարան, Յերեվան

քանալ նրա սկզբնական աշխատանքային ունակությունները, վունք անմիջապես կապված են յերեխայի շարժողական կարողությունների դարձացման հետ. այդ պատճառով ել անհրաժեշտ ենց այդ ժամանակ ստեղծել յերեխայի շարժողական հիշողությունները, աշխատել, վոր նախադպրոցական շարժումներն ըստ հարավորին ունենան կանոնավոր, վորոշ և խնայողական բնույթ։ Աշխատանքի և պաշտպանության նախապատրաստությունը գործնական կերպով պետք է սկսվի նախադպրոցական հիմնարկում և այս բնադավառի վողջ աշխատանքը պետք է սերտ կերպով կապված և համաձայնեցված լինի դպրոցի հետադա աշխատանքի հետ։ Ֆիզիկապես ամրացնելով, միաժամանակ մենք ավելի բարեհաջող պայմաններ ենք ստեղծում յերեխայի աշխատանքային դարձացման համար և նախադրյալներ ստեղծում նրա աշխատանքային ակտիվության և նախաձեռնության համար։ Վերջապես, պաշտպանության համար նախապատրաստելու բնադավառում արդեն նախադպրոցական հասակում հիմք է դրվում մի շարք թանգարժեք հատկությունների, վորոնք անհրաժեշտ են ապագա մարտիկին, —կոլեկտիվում կազմակերպվածության և կարդապահության տարրեր, շարվելու և վերաշարվելու ժամանակ պարզուցություն և շարժողության համաչափություն, տեղի կողմնորոշում, խոչընդոտները հաղթահարելու կարողություն, վճռականություն, համարձակություն, հնարագիտություն, դիպություն, աչքաչափ։

Այսպիսով, Փիլիկական դաստիարակությունը նախադպրոցական հասակում գործնականում հանդում է հետեւյալին։

1) Ստեղծել ամենաբարեհաջող պայմաններ յերեխայի ընդհանուր ֆիզիկական դարձացման համար, նրա աճման և որդանիքմի ձևավորման համար (միջավայրի և մանկական կենցաղի առողջապահություն)։

2) Պայքարել տարափոխիկ հիվանդությունների, հոգնածության, հյուծվելու և ամեն տեսակի վնասակարության դեմ, վորոնք սպառնում են յերեխայի առողջությանը (մանկան առողջության պահպանություն)։

3) Մանկան որդանիքմի ակտիվ առողջացում, ամրացում, կոփում՝ բարձրացնելու համար նրա տոկունությունն ընդդեմ շրջապատող միջավայրի զնանական վնասակար ազդեցությունների (բնական Փակտորների ոգտագործում — արև, ջուր, ող)։

4) Դաստիարակել յերեխաների առողջապահական և կուլ-

տուր — կենցաղային ունակությունները, ակտիվ, գիտակցական վերաբերմունքը գեպի կյանքի կազմակերպումը, առողջացնող աշխատանքը և պայքարել առողջ կենցաղի համար (ունակությունների կուլտուրան և առողջապահական դաստիարակության տարրեր)։

5) Նախազգուշանալ մանկան որդանիքմի զարգացմանը խանգարող զանազան տեսակի անկանոնություններից (վողնաշարի ծոռություն, հողերի անկանոն դրություն, վոսկրերի ծովել, կրծքի վանդակի թույլ զարդացում և այլն)։ Պայքարել արդեն յեղած խախումների գեմ (պրոֆիլակտիկ և կորրեկտրացնող միջոցառումներ)։

6) Զարգացնել և ամրացնել յերեխայի շարժողական ապահովածք (յերեխան պետք է տիրապետի հիմնարկան կենսական-անհրաժեշտ շարժումներին, սովորի այդ շարժումներն ավելի կանոնավոր, ճիշտ ու խնայողաբար կատարել, կանոնավորի իր շարժումները և տիրապետի նրանց)։

7) Զարգացնել այն հատուկ շարժողական կարողությունները, վորոնք կազմում են յերեխային մատչելի աշխատանքային գործունեյության հիմքը. աշխատանքի ընդհանուր նախապատրաստության՝ ձարափկությունը, ճշտությունը, շարժողության համաչափությունը զարգացնելու նպատակով. կայունություն աշխատանքի մեջ. կարողանալ ուսցիունալ կերպով ծախսել իր ուժերը. իր շարժումները համաձայնեցնել կոլեկտիվ աշխատանքին այլ մասնակցողների հետ (աշխատանքի նախապատրաստություն)։

8) Զարգացնել ապահով մարտիկի համար անհրաժեշտ հոգեֆիզիկական հատկությունները. կարողանալ պարզորոշ և կազմակերպված շարժումներ կատարել՝ կոլեկտիվի շարումների և վերաշարումների ժամանակ, կազմակերպվածություն և կարգապահություն, կոլեկտիվում, տարածության մեջ շարժվելու կողմնորոշում, տեղի կողմնորոշման ունակություն, խոչընդոտները հաղթահարելու կարողություն, դիպություն և աչքաչափի դարբացում, վճռականության, համարձակության, հնարագիտության, համբերատարության զարգացում։

Նախադպրոցական հասակի ֆիզիկաստիարակության գործնական խնդիրները գրությալորելիս, անհրաժեշտ է հիշել, վոր այս բնադավառի վողջ աշխատանքը պետք է յնթարկված լինի կումանիստական դաստիարակության խնդիրներին, սերտ կերպով

կապված լինի մանկավարժական պրոցեսի ընդհանուր բավանդակության հետ և հագեցված լինի դասակարգային կոմունիտական բովանդակությամբ:

II ՖԻԶԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՑՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՅԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՈՒՄ

Մոռւրային շրջանի համեմատությամբ, նախադպրոցական հասակում յերեխան ստանում և բավականաչափ ինքնուրույնություն, որ ըստ որեւ լայնանում և նրա կապերի շրջանը՝ շրջապատող միջավայրի հետ, այդ կապերն ստանում են ավելի գործոն, ակտիվ բնավորություն, բայց միաժամանակ յերեխայի որդանիդը դեռևս չատ անկայուն և և յերեխայի Փիղիկական առողջ վիճակը հետությամբ խախտվում և առողջապահական վատ պայմանների ազգեցությունից, սննդի, ողի, լույսի պակասությունից, անկանոն քնից:

Այդ պատճառով ել այս հասակում առողջաշնորհ աշխատանքի և Փիղիկաստիարակության հիմքում պետք ե դնել մանկական կենցաղի ընդհանուր առողջապահությունը — չնչքի, կահավորման, ուժիմի, սննդի, քնի և յերեխայի անձնական առողջապահությունը: Հատկապես առողջապահական լավ պայմանները նպաստում են վարակիչ հիվանդություններով չհիվանդանալուն. պետք են կատի ունենալ, վոր առանձնապես նախադպրոցական հասակի յերեխանների մեջ վարակիչ հիվանդությունները շատ են տարածված լինում:

Անհրաժեշտ և յերեխանների վորչ կենցաղն այնպես կազմակերպել, վոր վոչ միայն ապահովվեն յերեխանների Փիղիկաստիարակության նորմալ պայմանները, այլև յերեխանները դառնան իրենք իրենց առողջ կենցաղը կազմակերպողներ, նրանց մեջ դաստիարակի առողջապահական պայմանների պահանջ և իր առողջությունն ու կենցաղն ստեղծելու, պահպաններու և դեպի այն գետակցաբար վերաբերվելու կարողություն:

Ֆիղիկաստիարակության գործում մեծ նշանակություն ունեն ակտիվ առողջացման հատուկ միջոցները, այսինքն՝ մանկան որդանիդը վրա այնպիսի ներդործումը, վորը բարձրացնում և նրա կայունությունը, ակտիվացնում վորչ որդանիդի գործունեյությունը, մորիկացիայի յենթարկում որդանիդը ուժերը՝ պայքարելու գործություն ունեցող խախտումների ու բացերի դեմ:

(որպանիդմի ընդհանուր թուլություն, նյութերի փոխանակության քայլացում, խրոնիկական հիվանդություններ):

Նախադպրոցականի ակտիվ առողջացման կարեորագույն ճանապարհը բնական ֆակտորների — արևի, ջրի, ողի ոգտագործումն և (որդանիդմը կոփելը):

Բայց նրա որդանիդմի վրա ավելի ակտիվ ներգործություն ունի իր սեփական մկանային աշխատանքը: Այդ պատճառով ել նախադպրոցականի ակտիվ Փիղիկաստիարակության հիմքը հանդիսանում է շարժողական (մոտոր) դաստիարակությունը: Յերեխայի շարժումները կազմակերպելով, մենք ապահովում ենք նրա շարժողական ապարատի և շարժողական կարողությունների նորմալ զարգացումը և միենույն ժամանակ շարժման որդանիդը ընթացքում խթանում ենք նրա չնչառությանը, արյան շրջանառությանը, ներկային սիստեմի աշխատանքին և այլն:

Ուրիշ խոսքով, շարժումը մորիկիզացիայի յև յենթարկում որդանիդմը, բոլոր ուժերը, դրանով իսկ ամրացնում որդանիդմը, բարձրացնում նրա կայունությունը, տոկունությունը, աշխատանքակությունը: Սակայն այս դրական հետևանքներին հասնում ենք միայն այն ժամանակ, յերբ շարժումների բնույթը համապատասխանում և յերեխայի որդանիդմի առանձնատկություններին և ընդհանուր ծանրաբեռնվածությունը համապատասխանում ենրա Փիղիկական հնարավորություններին: Հատկապես անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր նախադպրոցականի կմախքի վորկացումը դեռ չի ավարտվել, կապերն ու հողերը գեռ ամուր չեն, այնպես վոր ամեն մի ուժից վեր Փիղիկական ծանրաբեռնվածություն կարող է մեծ վնաս պատճառել նրան: Այդ պատճառով ել Փիղիկական դաստիարակությունը նախադպրոցական հասակում պետք ե կառուցվի վորոց ծրագրով ու հատուկ մեթոդներով:

Մեծ նշանակություն ունեն աղասի չարժական մանկական խաղեր, սակայն Փիղիկաստիարակության բնագավառում վոչ մի պլանային, սիստեմատիկ աշխատանք չի կարող կառուցվել միայն աղասի խաղի վրա: Անհրաժեշտ և, վոր յերեխան զարգանա, առաջ դնա չարժաման մեջ, պլանային կերպով կատարելագործի իր շարժումները և աստիճանաբար տիրապետի նոր, ավելի բարդ շարժումների: Անհրաժեշտ և, վոր յերեխան վոչ միայն կարողանա ողտվել իր շարժումներից, այլև սովորի կանոնավորել և տիրապետել այլ շարժումները: Այս բոլորին կարելի յև հասնել յերեխայի չարժումները սիստեմի յենթարկելով, կազմակերպված շար-

ժական խաղերի, յերաժշտա-ոիթմիկ պարապմունքների և միքանի մարմնամարդական բնույթ ունեցող վարժությունների ող-նությամբ:

Ընդհանրապես ակտիվ Փիզիկական դաստիարակության և մասնավորապես նախադպրոցական հասակի համար հիմնական միջոցները կազմակերպված չարժական խաղերն են:

Ընդհանուր առողջապահական մեծ արժեք ունեն նաև բացո-թյա սպորտ զվարձանքները — ձեռնասահնակները, դահուկները, ավելի մեծ հասակի համար՝ չմուշկները:

Թարմ ողում կատարած չարժողությունները տալիս են բնա-խոսական բարձր եֆեկտ, վորն ավելի ամրացվում է դրական հուզական լիցքով: Ամռան այդպիսի նշանակություն ունեն ազատ չարժողությունները հրապարակում, ուր ողտագործվում են մարմնամարդական գործիքները (տես ներքոհիշյալը):

Այդպիսով, նախադպրոցական հասակի Փիզդաստիարակու-թյան հիմնական միջոցներն են.

1. Միջավայրի առողջապահական կազմակերպումը և ման-կան կենցացի առողջապահական կուլտուրան:

2. Կուլտուր-կենցաղային և առողջապահական ունակու-թյունների սիստեմատիկ դաստիարակությունը (մանկան վարքի կազմակերպումն առողջ կենցաղի պայմաններում):

3. Յերեխայի կենցաղի մեջ պլանային կերպով ակտիվ-առող-ջացնող բնույթի հասուկ գործողությունների կարգ մտցնելը, —ողի և արեկի վանաներ, շիում, լողալ և այլն:

4. Յերեխայի չարժողական ապարատը սիստեմատիկորեն դարպացնելը և որդանիքմի ընդհանուր ամրացումը՝ կազմակերպ-ված չարժումների միջոցով:

Շարժողական (մոտոր) դաստիարակության գործնական մի-ջոցներն են.

ա) կազմակերպված չարժողական խաղեր.

բ) յերաժտական-ոիթմիկ պարապմունքներ (կազմակերպ-ված չարժումներ՝ դաշնամուրի նվազակցությամբ):

շ) սպորտ զվարձալիք.

դ) հատուկ վարժություններ (շարում և վերաշարում խըմ-բում, քայլք, վաղք, թոփչք, նետել, չարժումներ հավասարա-կության պահպանմամբ):

Ե) արատ չարժական խաղեր, վորոնք խթանվում են համա-պատասխան նյութերի, պիտույքների և միջավայրի միջոցով.

զ) աշխատանքի մեթոդների, կազմակերպված պարապմոնք-ների, ուժիմի մամենաների ընդհանուր ակտիվացում:

III ՖԻՂԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ֆիղդաստիարակչական աշխատանքը մանկավարժական աշ-խատանքի առանձին մասը չի հանդիսանում և բոլորովին չի սահ-մանափակվում միայն հատուկ պարապմունքներով և առողջաց-նող — առողջապահական կարգի գործողություններով: Վողջ ման-կավարժական պրոցեսը, յերեխաների վողջ կենցաղը պետք է հա-գեցված լինի առողջացնող բնույթի տարրերով և, ընդհակառակը, այն բոլորը, ինչ վոր կատարվում է Փիղդաստիարակության բնա-դագավառում, պետք է հագեցած լինի լիարժեք մանկավարժական բովանդակությամբ: Այս տեսակետից Փիղդաստիարակությունը յերբեք չպետք է վերածվի ձեւական մարզանքի: Այս բնագավա-ռով վողջ աշխատանքը պետք է կատուցվի յերեխաների հետաքըր-քըրության վրա՝ հաղեցած գործունեյության ցայտուն հուզական դրույթներով, այսպիսով՝ Փիղդաստիարակության հիմնական նպատակը պետք է լինի այն, վոր յերեխաները դիտակցեն, թե նախապատրաստվում են հետագայում սոցիալիստական շինարա-րությանն ակտիվ մասնակցություն ցույց տալու, նախապատ-րաստվում են աշխատանքի և պաշտպանության: Նախադպրոցա-կան հասակում Փիղդաստիարակության հիմնական բաղան հան-դիտանում է միջավայրի առողջապահական կազմակերպումը և մանկավարտեղի առողջ կյանքը (առողջապահական ուժիմ): Ման-կան վողջ կենցաղն այնպես պետք է կազմակերպված լինի, վոր առողջապահական պայմանները սովորություն դառնան, առող-ջապահության հիմնական կանոնները կատարելը յերեխաների հա-մար բնական պահանջ դառնա:

Մասնավորապես անհրաժեշտ և ուշադրություն դարձնել չենքի մաքրության և սգափոխության վրա, առողջապահական պահանջների կատարման վրա՝ վոչ միայն յերեխաների խմբակա-յին սենյակներում, այլև մանկավարտեղի ամբողջ շենքում (իսո-հանոց, արտաքնօց, միջանցք), վոր կահկարասին համապատա-խանի յերեխաների հասակին, վոր ոժանդակ նյութերը և խաղա-մեքներն առողջապահական ձեռով պահվեն, վոր աշխատանքային

սարքավորումը համապատասխան լինի (աշխատանքի սեղաններ, գործիքներ) յերեխանների հասակին և ուժերին, վոր յերեխանները կատարեն անձնական առողջապահության հիմնական և առողջապահական գործողությունների կանոնները (ձեռքերի, յերեսի և չորերի մաքրություն, առավոտյան ըլացվել, առամները մաքրել, արտաքնոց գնալուց հետո և ուտելուց առաջ ու հետո ձեռքերը լվանալ, ամառը քնելուց առաջ վոտները լվանալ, արտաքնոցն ողտադործել կանոնավոր կերպով, ուտելիս մաքրություն պահպանել, աշխատանքից և խաղից հետո չենքը կարգի բերել և այլն):

Առողջապահական տեսակետից լավ կազմակերպված միջավայրի Փոնի վրա մանկական սմբողջ կենցաղն ել պետք եւ դրված լինի առողջապահական ըրջանակների մեջ: Առողջ ուժիմի հիմնական պահանջները հետեւյալներն են.—մանկան գործունեյության առանձին տեսակները (կազմակերպված պարագմունքները և ուժիմի մոմենտները) պետք եւ դասավորվեն այնպես, վոր հանդիսատ պարագմունքներին հաջորդեն շարժական պարագմունքները և պահպանվի սննդի ու քնի հաջորդականությունը: Ֆիզիաստիարակության եյությունը կայանում է վոչ միայն մանկան գործունեյության կազմակերպման մեջ, մասնավորապես յերեխայի շարժողական ակտիվության, այլև մանկան հանգստի կանոնավոր կազմակերպման մեջ: Այնուհետև պետք եւ աշխատել, վոր յերեխանները, վորքան կարելի յե, շատ մնան դրսում: Ամառը, լավ յեղանակին, յերեխանները պետք եւ ամբողջ որը դուրսն անցկացնեն, իսկ անձրես յեղանակին՝ պատշպամբում: Զմեռը դրսում մնալը վոչ մի դեպքում յերկու ժամից պարագ պատշաճ է լինի:

Առողջապահական տեսակետից չափաղանց մեծ նշանակություն ունի յերեխանների ցերեկվա քունն ամբողջ տարվա ընթացքում դրսում կազմակերպելը. յերեխանները տեղափորվում են քամուց պաշտպանված պատշտմբում — ձմեռը մորթե կամ բամբակե տոպրակներում: Դրսում մնալու տեղությունն աստիճանաբար ավելանում է, սկսած 20—30 րոպեից, և արդեն 1—2 դեկադի ընթացքում հասնում է 1½—2 ժամի: Յեթե բոլոր յերեխաններին դուրսը քնեցնելու համար հարմարություններ չլինեն, ծայրահեղ դեպքում այդ հնարավորություններով պետք եւ ողտվեն թույլ առողջություն ունեցող յերեխանները (ըստ բժշկական քննության):

Նախադպրոցական հիմնարկի որվա որինակելի կարգ-կանոնը

պետք ել լինի այսպես: Յերեխանների առավոտյան հավաքի ժամանակամիջոցը պետք ել ողտությալական կարգի գործողությունների համար. սրանց եւ վերաբերում ըլացվելը, յերբ կարելի յե՝ նաև շփումը մինչև գոտին, ատամները մաքրելը, չորփոխելը և սանիտարական ստուգումը: Առողջապահական կարգի գործողություններից հետո, յերեխաններն ստանում են նախաճաշ և սկսում կազմակերպված պարագմունքները: Ավելի բարդ պարագմունքները պետք ել կատարել առավոտյան ժամերին:

Այդ պարագմունքների բնույթից յելնելով, դրանք կարող են լինել ավելի կամ պակաս չափով շարժական. և վորքան հանգիստ բնույթ կրի (անշարժ, նստած) այս կամ այն պարագմունքը, այնքան ել նրա տեղությունը պետք եւ սահմանափակ լինի (ամենաբարձր տեղությունը ստորին խմբի համար 20 րոպե, միջին խմբի համար՝ 30 րոպե և բարձր խմբի համար՝ 40 րոպե): Կարմակերպված պարագմունքների արանքում յերեխաններին պետք եւ հնարավորություն տալ ազատ շարժողություններ կատարելու, խմբ վորոշ դեպքերում, լարված աշխատանքից հետո, նպատակարամար եւ կատարել տալ կազմակերպված կարճատև շարժողություններ (Փիզիոլոգոպակներ, շարժումներ յերաժշությամբ և այլն): Ամենափոքր հնարավորություն լինելու դեպքում, անհրաժեշտ եւ կազմակերպված պարագմունքների մեծ մասն անցկացնել բացությա:

Վորակես որենք, որվա առաջին կիսի յեղրափակելիչ պարագմունքը պետք ել լինի հատուկ ֆիզկուլտ բնույթ ունեցող զբաղմունք: Այդ պարագմունքը պետք ել ավելի կանոնավոր կատարել, վորակես հսմակցված դաս, վորն իր մեջ պարունակում ել յերաժշտական — ոիթմիկ բնույթի տարրեր, կազմակերպված շարժական խաղեր, մի քանի բնական շարժումների տեսակի հատուկ վարժություններ (վաղք, թռիչքներ, նետում), կազմակերպված ձեկի վարժություններ (շարումներ, քայլք) և յեղրափակելիչ (հանգըլությունող) վարժություններ: Նախադպրոցականների համար յուրաքանչյուր անդամ այլպիսի «ղասկ» հիմքը պիտի լինեն կազմակերպված շարժական խաղերը: Խաղերը պետք եւ համապատասխան յերեխանների հասակին, ստորին խմբում գլխավորապես ընդորինակված խաղեր, միջին խմբում պարզ խաղեր՝ որենքներով և ղեկավարով, բարձր խմբում խաղի որենքները կարող են բարդանալ. այստեղ արդեն հնարավոր ել յերեխաններին բաժանել խմբերի և մտցնել կուեկտիվ սոցմրցման մի քանի տարրեր: Մեծ

յերեխաներից կարելի յե պահանջել, վոր ինքնուրույն կերպով կազմակերպեն իրենց ծանոթ խաղը, խաղան ու պետի ճիշտ կատարեն խաղի որենքները: Վորպեսզի յերեխաները չողնեն, շարժական խաղերի հետ միասին՝ պետք ե կատարել նաև ավելի հանդարտ խաղեր: Պարագմունքների տեղությունը՝ պետք ե լինի փոքրերի համար՝ 10—15 րոպե, միջին խմբի համար՝ 15—20 և բարձր խմբի համար՝ 25—30 րոպե:

Պարագմունքները պետք ե կառուցել այնպես, վոր Փիզիկական ծանրաբեռնվածությունն ամի աստիճանաբար, պարագմունքի վերջին հասնի ամենաբարձր աստիճանի և հետո, հանդստացնող շարժողությունների միջոցով, նորից իջնի նորմային: Պարագմունքը յերբեք չպետք ե ավարտել ծանրաբեռնվածության բարձր աստիճանի ժամանակի, յերբ յերեխաները տաքացած են, հուզված, չնչառությունն արագ և այլն. անհրաժեշտ ե նրանց հետագործություն տալ իջնելու նորմային, պարագմունքը վերջանել հանդարտ շարժումներով կամ մարզով:

Յեթե կազմակերպված պարագմունքները կատարվում են չենքի ներսում, ասկա ճաշից առաջ յուրաքանչյուր դեպքում պետք ե դուրսն անցկացնեն $1\frac{1}{4}$ ժամից վոչ պակաս: Նայած պայմաններին, այդ պարագմունքները կլինեն բացոթյա պատ կամ կալմակերպված խաղեր, սպորտ դվարձանքներ, աշխատանք նյութի հետ կամ զբոսանք: Համենայն դեպք, խիստ կարենու ե, վոր յերեխաները կազմակերպված շարժումները բացոթյա կատարեն: Ճաշից հետո փոքրէիները և թուլակազմ յերեխաները քնում են ($1\frac{1}{4}$ —2 ժամ), մեծերի համար կազմակերպվում են (յեթե պայմանները թույլ չեն տալիս ապահովել բոլոր յերեխաների քունը) հանդիսատ, չողնեցնող պարագմունքներ (ընթերցանություն, դրույցներ և այլն), իսկ դրանից հետո, որպա յերկրորդ կեսին, յերեխաներն անպատճառ պետք ե ունենան $1\frac{1}{2}$ ժամ ժամանակ՝ ապատ պարագմունքների և խաղերի համար: Այս դեպքում զեկավարի անելիքն այն ե, վոր համապատասխան ձեռով կազմակերպվ միջավայրը և խթան հանդիսանա խաղալու այն խաղերը, վորոնք իրենց բովանդակությամբ ունեն մանկավարժական արժեք և ֆիզկուլտուրայի, առողջապահական և շարժողության ձևակորման տեսակետից արժեքավոր են:

Հենց մանկապարտեղի սարքավորումը պետք ե այնպես կազմակերպել, վոր յերեխաներն ակտիվ շարժողությունների լայն համարություն ունենան. չենքը չպետք ե ծանրաբեռնված մի-

նի ավելորդ իրերով, յերեխաները պետք ե վազվղելու, թուչկուելու, կահկարասին դեսղեն քաշելու (խաղալիս) հնարավորություննենան: Բայց, վոր ամենակարևորն ե՝ յուրաքանչյուր մանկամիմնարկ պետք ե իր տրամադրության տակ ունենա ընդարձակ, սարքավորված հողամաս՝ բացողյա խաղերի և պարագմունքների համար:

Կազմակերպված խաղերի սիստեմում մարմնամարզական գործիքներ ունենալն անհրաժեշտ չե. բայց յերեխաների աղատ շարժողությունների համար, մասնավորապես հրապարակում, միքանի հասուկ սարքավորում ունենալն արժեքավոր ե. որինակ մագլցելու, վազքի, թոփչքի, ձգելու համար: Նախաղպրոցական հրապարակում թեք յելարան, պարանի յելարան, զանազան տեսակի տրապեցիաներ, տրամավիճներ և ողակներ չպետք ե լինեն: Հրապարակը ձմեռը պետք ե համապատասխան ձեռվ կահավորված լինի (ձյունե սար, սղղալու տեղ, ձնագնդի խաղալու տեղ): Նախաղպրոցականի շարժողական դաստիարակության հիմնական խողին ե՝ յերեխայի շարժումների վորակական կատարելագործումը — զարգացնել արագությունը, ճշտությունը, շարժումների խնայողությունը, կարողանալ իր շարժումները կառավարել, կանոնակորեցնել, ձեռք բերել շարժողական և տարածական կողմնորոշում:

Որդանիզմի վրա շարժումների ունեցած բնախոսական աղղեցության տեսակետից, կարենոր նշանակություն ունի չնչառության աղարարախի ամրացումը: Այս նպատակին կարելի յե համեն դանական շարժումների միջոցով, պայմանով, վոր շարժումները կատարվեն յեռանդուն կերպով, միաժամանակ ըստ հնարավորին համաշափ տեմպերով, շարժողությանը մասնակցեն համեմատար շատ մկաններ և աղատ, խորը չնչառությանը վոչ մի բան չինանդարի:

Նկատի ունենալով շարժումների ընդհանուր բնախոսական նշանակությունը, խիստ կարենու ե, վոր բոլոր շարժական պարագմունքները և խաղերը կատարվեն այնպիսի բարեհաջող առողջապահական պայմաններում, վորոնք ապահովեն մաքուր, թարմողի ներկայությունը: Ավելի լավ ե պարագմունքները կատարել բացոթյա, իսկ յեթե պարագմունքները կատարվում են չենքում, ապա չենքը պետք ե լինի մաքուր, լուսավոր, ընդարձակ և ողափոխական:

Յերեխաների առողջ կենցաղը կազմակերպելով, մանկամիմնար-

կը միւնույն ժամանակ յերեխաների մեջ պետք ե դաստիարակի գիտակցական վերաբերմունք գեղի այդ կենցաղը և զեպի իրենց առողջությունը, դաստիարակի առողջապահական կայուն ունակություններ, վորոնք հենվում են վոչ թե ալտոմատիկ վարժությունների, այլ աշխատանքի և կենցաղի առողջ պայմաններ ունենալու գիտակցական պահանջի և առողջ կենցաղի համար պայքարելու շահագրգութածության վրա:

Զանազան առողջապահական գործողություններ կատարելով, նոր կարողություններ և ունակություններ ձեռք բերելով, յերեխան միաժամանակ պետք է իր ուժերի համեմատ հետզետե բացատրի դրանց նշանակությունը և դրա հետ միասին ստանա տարրական գիտելիքներ (նրա համար պարզ և մատչելի ձևով) մաքրության մասին, տարափոխիկ հիվանդությունների դեմ տարվող պայքարի մասին, արևի, ջրի, ոդի նշանակության մասին, այն մասին, թե որդանիզմի համար ի՞նչ նշանակություն ունի կանոնավոր ռեժիմը, սնունդը և քունը, աշխատանքի համար նախապատրաստվելու և ուղղմականացման տեսակետից յուրաքանչյուր առանձին շարժման նշանակության մասին և այլն:

Յերեխաների ֆիզիկական դաստիարակության և առողջ կենցաղի համար մղվող պայքարի խնդիրները մանկականարկի շրջանակով չեն սահմանափակվում. այդ աշխատանքը պետք է փոխադրել և ընտանիքը. ընդունիքն իրենք՝ յերեխաները պետք է կուլտուրական առողջապահության ակտիվ տարածողները լինեն և ձեռք բերած ունակությունները վոխադրեն ընտանեկան կենցաղի մեջ:

Այդ պատճառով ել ֆիզիաստիարակչական աշխատանքը պետք ե սերտ կերպով կապված լինի մանկապարտեղի հասարակական – մանկավարժական աշխատանքի հետ և առողջ կենցաղի այն բոլոր պահանջներն ու նորմաները, վորոնք մանկապարտեղի աշխատանքի հիմքն են կազմում, պետք է հավասար չափով կատարվեն յերեխաների ընտանեկան կենցաղի պայմաններում:

Ֆիզիաստիարակության աշխատանքները կազմակերպելիս և պլանավորելիս, պետք է խստիվ հաշվի առնել յերեխաների ֆիզիկական զարգացման մակարդակը, նրանց ուժերն ու առողջությունը և առանձին յերեխաների վերաբերյալ համապատասխան ձևով փոփոխել և' աշխատանքի ձևերը, և' ընդհանուր ֆիզիկական ծանրաբեռնվածությունը:

Թույլ, հյուծված և ներփային յերեխաների համար անհրա-

ժեշտ և լրացուցիչ հանգիստ (պարտադիր և յերկարաժամկերպուն) և վորոնք դեպքերում՝ լրացուցիչ սնունդ: Այն խաղերին ու շարժումներին, վորոնք պահանջում են լարվածություն, այդպիսի յերեխաները չպետք ե մասնակցեն: Նրանք պետք ե ունենան հանդարստ, ուշագրավ պարապմունքներ: Յեթե մեծ կոլեկտիվը նրանց մեջ հոգնության յերեխություններ ե առաջ բերում, ապա այդպիսի յերեխաներին պետք ե ժամանակավորապես առանձնացնել կոլեկտիվից: Վորպեսդի դեպի առանձին թույլ յերեխաները ձեռք առած միջոցները հաջողություն ունենան և ֆիզիաստիարակչական վողջ աշխատանքը լրիվ չափով համար իր նպատակին, անհրաժեշտ և կանոնավոր կերպով բժշկական հսկողության յենթարկել յերեխաների ֆիզիկական դաստիարակությունը և յուրաքանչյուր մանկականարկությունը:

ԾՐԱԳԻՐ

ԱՏՈՐԻՆ ԽՈՒՄԱ

ԱՌԱՂՋԱԳԱՀԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնական խնդիր .—Յերեխաները պետք է յուրացնեն հիմնարկի առողջապահական ռեժիմը և տիրապետեն այն տարրական կարողություններին, վորոնք անհրաժեշտ են տարրական ինքնապասարկման և առողջապահական հիմնական դործողությունները կատարելու համար :

ՅԵՐԵՒԽԱՆԵՐԻ մԵջ պետք է զատարակել մաքուր լինելու պահուց և կարգապահության սեր:

Իրենց տարիքային հնարավորությունների համաձայն, յերեսանները պետք ե տիրապետեն հետելյալ առողջապահական և կուլտուրական աշխատավայրին ունակություններին. —

Կանոնավոր կերպով ուժով արտաքնօշից, մաքուր լինել և, մէծերի նվազագույն ոգնությամբ, կարդի բերել իր հագուստը:

Լվացվել առավոտայն և քննելուց առաջ, կարողանալ ոճառով լվանալ. ձեռքերը, իբրևս և սրբել (մեծերի հսկողությամբ):

Արտաքնոց գնալուց հետո, ստելուց առաջ և հետո, կենդանիներին խնամենուց, կեղտոտ աշխատանք կատարելուց հետո ձեռքերը բանալ:

Ձեռքբարը չդնել թերանը, աշքերին ձեռք չտալ, ուրիշների դեմաց նստած ժամանակ չփոշտալ ու հճպալ:

Ուտելուց հետո բերանն ու կոկորդը ջրով վաղողել։
Կանոնավոր Աերակ սեղան նստել, գուալ պառածել, կերա-

Կուրք Քթաղել, լսի Ժամել, ուտել առանց շտապելու, ուտելիս
չխոսել, անձեռողիկ ռոսդածել:

Ուրիշի պնակից չուտել, ուրիշի գղալը կործ չածել, ուրիշի
կտորտանքը չուտել:

Սեղան նստած ժամանակ կարգապահ լինել, ուրիշներին չխանդարել, հազոր ձեռքն սկսանեա Հեղուանու:

16

Հետևել իր շորերի մաքրությանը և ժամանակին դիմել մեծերի ոգնությանը (Կարկատել, մաքրել, կոճակը կարել):

Ինքնուրույն հագնվել և հանվել, կոճկել շորի ու առջեկի կողմում գտնված կոճակները, շորը կախարանից վերցնել և փորոշ ձևով հագնվել:

Շորենի հետ կանոնավոր վարչել, վերնազգեստը հասակին չգցել, ճանաչել իր կախարանը, կարողանալ ծալել շորեն ու գուլպաները:

Իր յերեսսրբէիք տեղն լմանալ, կանոնավոր կերպով կախել,
ուրիշի յերեսսրբէրը գործ չածել:

Կարողանալ քիթը մաքուր պահել և թաշկինակ գործածել :

Ճենքը կանոնավոր պահել, հատակը չկեղտոտել, ջուր, առավալ չթափել, կահ-կարասին և պատերը չկեղտոտել, պարագաներից և խաղերից հետո խաղալիքները և այլ իրերը հավաքել ու տեղը դնել:

Պարապմունքներն ու խաղերը կատարել ուժիմի շրջանակում՝
մեծերի անմիջական դեկավարությամբ, աշխատանքն սկսել և
վերջացնել դեկավարի հիերեզման կամ կոչի միջոցով:

Քննելիս կանոնավոր դիրքը բռնել (քննել աջ կողքի վրա, ձեռքերը վերմակի վրա դրած) :

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՅԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Հիմնական խնդիրը — Յերեխաները պետք է ձեռք բերեն հիմնարկի միջավայրի, որվա ռեժիմի կողմնորոշումը։ Գետք և գետակցական վերաբերմունք ունենան դեպի առողջապահական գործողությունների կատարումը և շատ տարրական ձեռվ հասկանան նրանց նշանակությունն առաղջության համար։

Գործնականությունը յերեխաները պետք է ստանան պատկերացում՝ ների հետևյալ պաշարով.

Իմանալ, վոր առողջության համար անհրաժեշտ և պարբերաբար և վորոշ ժամկի ուսել և քնել, մաքրություն պահպանել և ամեն որ լինել մաքուր որում:

Գիտենալ, վոր ողի, կերակրի և մաշկի կեղաստությունից ստացանում են հիվանդություններ. այդ պատճառով ել պետք է չենքն ողափոխության յենթարկել, այնպես անել, վոր կերակրի վրա փոքի ու կեղտ հստակ: մաշկը մաքուր պահել:

Գիտենալ, վոր տարափոխիկ հիմանդրությունները մի մար-



գուց մյուսին են անցնում հիվանդի հետ շիռում ունենալիս և հիվանդի իրերի միջոցով, այդ պատճառով ել չպետք ե զնալ այս-տեղ, ուր հիվանդներ կան. ուրիշի յերեսսրբիչը, թաշկինակը չպետք ե գործածել. ուրիշի ափսենից չպետք ե ուտել. ուրիշի պետք չպետք ե գործածել և ուրիշի կերածի մնացորդները չպետք ե ուտել:

Գիտենալ, վոր միջատները (փայտոջիլները, վոջիլները, ճան-ճերը) վարակ են տարածում. այդ պատճառով պետք ե ամեն կերպ վոչնչացնել այդ միջատներին, իսկ զբա համար անհրաժեշտ ե ա-մենից առաջ մաքուր պահել անկողինն ու սպիտակեղենը, հաճախ լվացմել և սպիտակեղենը փոխել, ուտելիքը ծածկած պահել և սեղանի վրա կերակրի մնացորդները ու հացի կտորներ չպահել:

Գիտենալ, վոր կենդանիներից (կատու, ջուն) կարելի յե վարակվել (տափակ ճիճուկ), վոր միջատները կենդանիների վրայից անցնում են մարդու վրա. այդ պատճառով ել պետք ե խուսափել կենդանիների հետ սերտ կառ ունենալուց, չպետք ե թույլ տալ, վոր կենդանիներն իրենց թաթերը քսեն յերեսին, կենդանիներին խնամելուց հետո պետք ե ձեռքերը լվանալ:

Գիտենալ, վոր վարակը կարող ե տարածվել թքի միջոցով, այդ պատճառով ել չպետք ե թքել հատակին և ուրիշներին, ել չպետք ե թողնել, վոր թքեն:

Գիտենալ, վոր ատամները փշանում են՝ նրանց մեջ մնացած կերակրի մնացորդներից. այդ պատճառով ել անհրաժեշտ ե կա-նոնավոր կերպով մաքրել ատամները և ուտելուց հետո բերանը վողողել:

Գիտենալ, վոր առողջությունն ամբաջնելու համար անհրա-ժեշտ են շարժական խաղեր ու Փիղիկական վարժություններ:

Գիտենալ, վոր արել և մաքուր ողն ամբաջնելու առողջու-թյունը: Այդ պատճառով ել պետք ե ձգտել վորքան կարելի յե մաքուր ողում յերկար ժամանակ անցկացնել, իսկ ամառը թեթև չորեր հագնել, վոր մարմինն ողի և արեղակի ներդործության համար մատչելի լինի:

ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնական խնդիր. — Կանոնավորել այն բնական շարժում-ները, վոր յերեխաները կատարում են իրենց առորյա կենցաղում և խաղերի ժամանակ (քայլվածք, վազք, ցատկումներ, սողալ,

ժաղլցել, ձգել և բռնել գնդակը): Յերեխաները պետք ե սովորեն այդ բռլոր շարժումները կատարել բավական տնտեսաբար, առանց ավելորդ, կողմնակի շարժումների, ընդհանուր շարժումների ժա-ժամանակ պահպաններով ոիթմը և իր շարժման տեմպը համաձայնեց-նելով կոլեկտիվի ընդհանուր տեմպին:

Խաղի մեջ և յերաժշտա-ոիթմիկ պարագմունքների ժամանակ յերեխաները պետք ե տիրապետեն հետեյալ շարժումներին.

Քայլել ուղիղ, պահպանելով վորոշ և կանոնավոր ուղղու-թյուն (ուղիղ գծով գեպի վորոշ առարկա պատի յերկարությամբ) և վոփոխելով ուղղությունը ղեկավարի ցուցմունքի համաձայն: Քայլել, պահպանելով վորոշ տեմպ, յերաժշտության նվազակ-ցությամբ կամ յերգելով: Քայլել զույգ-զույգ և ոյուներ կազ-մած՝ մեկ-մեկ, իրարից առաջ չընկնելով և հետ չմնալով:

Կազմել հատասյուն և շրջան. վաղել, պահպանելով վորոշ ուղղություն:

Քայլել տախտակի (20 ս.մ. լայնությամբ) և հաստ գերանի (առնվազն 26 ս.մ. տրամադիմ ունեցող) վրայով, պահպանելով հավասարակշռություն:

Ցատկել տեղում, յերկու վորոշ, միաժամանակ վորոները գետնից կարելով:

Անցնել ցանկապատի վրայով (յերեխայի բարձրությամբ), անց կենալ ցանկապատի միջից — հորիզոնական բարակ գերաննե-րի արանքից (լայնությունը 30—35 ս.մ.):

Բռնել ղեկավարի գցած մեծ գնդակը 1—1½ մետր տարածու-թյունից:

Մեծ գնդակը վերև գցել և բռնել (մոտ 1 մետր բարձրու-թյուն):

Գնդակը գլորել վորոշ ուղղությամբ կամ յերկու առարկաների արանքով:

Գնդակը յերկու ձեռքով գցել ղեկի հորիզոնական մեծ թիրա-խը (արկղ), մինչև 1½ մետր տարածությունից:

Ուտելիս գործածել զդալ և պատառաքաղ (կանոնավոր կեր-պով բռնել դդալը, կերակուրը չթափել, կանոնավոր կերպով բռնել պատառաքաղը, մատիտը, կոճակները կոճկել ու բաց ա-նել):

Կանոնավոր կերպով բռնել մուրճը, սղոցը, մկրատը (պարզ և կարճամտե աշխատանք կատարելիս):

Ուտելիս կարողանալ անձեռոցիկ գործածել, ձեռքերով չու-
տել, հայն ընդհանուր ամանից պատառաքաղով վերցնել:

Շենքը կարդին պահել. բոլոր իրերը և նյութերը դասալորել
վորոշ տեղում, ավել և աղբը թափել արկղը, փոշին թաց չորով
արքել (խաղերից և պարապմունքներից հետո):

Առորյա կյանքում պահպանել անձնական առողջապահության
հիմնական կանոնները. գետնից կեղտոտ բաներ չվերցնել, ձեռ-
քերը յերեսին և աչքերին չքսել, ձեռքերը բերանը չդնել, հաղալիս
և փոշտալիս բերանը ձեռքերով ծածկել:

Ինքնուրույն հազնվել և հանվել՝ իրար ողնության դիմելով:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՅԵՎ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հիմնական խնդիր — Յերեխանները պետք ե գիտակցեն անձ-
նական առողջապահության կանոնների և ուժիմի պահանջների
կատարման նշանակությունն առողջության համար և տարրական
պատկերացումներ ստանակ տարափոխիկ հիվանդությունների
տարածման պատճառների և այն մասին, թե հիմնարկում ձեռք
առած առողջապահական միջոցներն ի՞նչ կերպ են նպաստում հի-
վանդությունների դեմ պայքարելուն և առողջությունն ամրաց-
նելուն:

Գործնականում յերեխանները պետք ե ստանան պատկերացում-
ների հետեւյալ պաշարը.

Գիտենալ, վոր անկանոն և քիչ սնունդը, անկանոն քունը,
մաքուր ողի պակասությունը և անշարժությունը թուլացնում են
օրգանիզմը, իջեցնում աշխատունակությունը և տարափոխիկ հի-
վանդությունների դեմ պայքարելու կայունությունը: Առողջ լի-
նելու համար պետք ե ամեն որ աշխատել և խաղալ (չարժողու-
թյունն ամրացնում ե որդանիզմը), լավ սնվել, ժամանակին ուտել
և կանոնավոր հանգստանալ:

Գիտենալ, վոր ամեն մի կեղտ տարափոխիկ հիվանդության
աղբյուր ե, վոր վարակը տարածվում ե կեղտոտ ողի միջոցով
փոշու հետ, հիվանդի թքի, իրերի և նրա հետ անմիջական շփում
ունենալու միջոցով:

Գիտենալ կրօնական ծեսերի վնասակարությունը (հաղորդ-
վելը, սրբերի պատկերներ համբուրելը և այլն վարակ են տարա-
ծում):

Գիտենալ, վոր պետք ե ձեռքերը մաքուր պահել, յեղունդ-

կողեկտիվով կազմակերպված շարժումներ կատարելիս, կո-
ռողանալ պարզ ազդանշաններ և հրամաններ կատարել:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանոնավոր կերպով կատարել առողջապահական գործողու-
թյունները և ուժիմի պահանջները՝ մանկավարժի անմիջական
դեկավարությամբ: Դեկավարի զրույցներն անհատական առող-
ջապահական կանոնների և ուժիմի նշանակության մասին, համա-
պատասխան դրբույկ—նկարներ և պլակատներ ոգտագործելով:
Յերեխաններին աստիճանաբար ներդրավել իրենց կյանքի կազմա-
կերպման և առողջապահական պահանջների կատարման ամենո-
րյա ստուգման մեջ: Աղատ խաղեր համապատասխան նյութերով
(գնդակներ, շարժիչներ, խոշոր շինարարական նյութ): Իմիտա-
ցիոն բնույթ ունեցող կազմակերպված շարժական խաղեր: Յերա-
ժշտական ոիթմիկ պարապմունքներ: Արևի ու ողի վանաններ,
լողանալ, բացությա խաղեր, սահնակներ, դահուկներ:

Մ Ի Զ Ի Ն Խ Ո Ւ Մ Բ

ԱՌՈՂՉԱՊԱՀԱԿԱՆ ՈՒԽԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնական խնդիր — Յերեխանները պետք ե տիրապետեն ինք-
նասպասարկման բոլոր հիմնական ունակություններին, կատարեն
անձնական առողջապահության բոլոր կանոնները և ուժիմի պա-
հանջները՝ մեծերի ընդհանուր դեկավարությամբ, բայց առանց
նրանց անմիջական ողնության: Առողջապահական պահանջների
կատարումը պետք ե հենվի յերեխանների՝ մաքրության, կարգ ու
կանոնի պահանջի և առողջապահության նշանակությունը հաս-
կանալու վրա:

Գործնականում յերեխանները պետք ե ձեռք բերեն հետեւյալ
ունակությունները:

Ինքնուրույն արտաքնոց գնալ, պահպանել մաքրությունն և
կարգ ու կանոն:

Ինքնուրույն լվանալ ձեռքերը, յերեսը, ականջները, քիթը,
ապա սրբել, ցամաքեցնել, մեծերի ողնությամբ վոտքերը լվա-
նալ:

Հետեւել իր շորերի և սպիտակեղենի մաքրությանը և ժամա-
նակին հոգ տանել զրանք կարկատելու և փոխելու մասին:

Ները կտրել և մաքրել, ձեռքերը բերանը չտանել, յեղումք-
ները չկըծել:

Գիտենալ, վոր յեռացնելիս վարակը և ճիճվի ձվերը վոչնչա-
նում են:

Գիտենալ, վոր խմելու և բանջարեղեն, մրգեղեն ու ամանե-
ղեն բանալու համար միշտ պետք ե յեռացրած ջուր գործածել
և յերեք հում ջուր չխմել:

Գիտենալ, վոր վարակը և ճիճվի ձվերը կարող են ընկնել կա-
թի մեջ, ուստի կաթը պետք ե յեռացնել, իսկ բանջարեղենը և
միրզն ուստելուց առաջ պետք ե յեռացրած ջուր լվանալ:

Գիտենալ, վոր մարմնի մաշկը մաքուր պետք ե պահել և ամ-
րացնել մաքուր ողի և արելի միջոցով:

Գիտենալ, վոր ֆիզվարժությունները և շարժական խաղերն
ամրացնում են առողջությունը, բարձրացնում ուժը և տոկունու-
թյունը՝ տարափոխիկ հիվանդությունների դեմ պայքարելիս. այդ
պատճառով անհրաժեշտ ե կանոնավոր կերպով պարապել Փիզ-
վարժություններով, այնպես, ինչպես կանոնավոր կերպով սնվում
ենք և քնում:

Գիտենալ, վոր ողը չիոխած սենյակի կեղաստ ողն առող-
ջության համար վնասակար և գլխացավ և առաջացնում. այդ
պատճառով ել պարապմունքներից, շարժական խաղերից և քնե-
լուց առաջ պետք ե սենյակի ողը փոխել:

ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնական խնդիր. — Բնական կենսարկան-անհրաժեշտ և տար-
րական աշխատանքային շարժումներ կատարելիս ձեռք բերել շար-
ժումների ճարպկություն, ճշտություն, կարողանալ իր շարժում-
ները տեմպի, ուժեղության և ուղղության տեսակետից կանոնա-
վորել և, կոլեկտիվի հետ շարժումներ կատարելիս, իր շարժում-
ները համաձայնեցնել ընդհանուրի հետ:

Գործնականում յերեխաները պետք ե տիրապետեն հետեւալ
շարժումներին.

Քայլել և վաղել, պահպանելով վորոշ ուղղություն և քայլե-
լիս, ըստ աղղանշանի (ուղղությունը փոխելիս), փոխել ուղղու-
թյունն ու տեմպը. տեմպի արագացում և դանդաղեցում, կանք
առնել ըստ աղղանշանի:

Նույնը կոլեկտիվ շարժումներ կատարելիս, հատասյունով
մեկմեկ կամ ըլջանում զույգ-զույգ:

Վաղել զույգ-զույգ՝ համաձայնեցնելով շարժման ուղղու-
թյունն ու տեմպը («Զիճճի»):

Կազմել և վերակազմել մի կամ մի քանի սյուներ, սյունից
շրջան և շրջանից սյուն, շարք կանդնել, քայլելիս ուղղվել:

Քայլել նստարանի (20 ս.մ. լայնությամբ) և գերանի վրայով
(25 ս.մ. բարձրությամբ), պահպանելով հավասարակշռություն.

Յատկել մի վոտով՝ տեղում և տեղից մի վոտնաշափ տարա-
ծության վրա, պահպանելով վոտների ճիշտ դրությունը (թա-
թերի վրա): Յատկել յերկու վոտով՝ 20—30 սմ. բարձրությամբ,
վոտները միաժամանակ բարձրացնելով գետնից:

Յատկել պարանի (մինչև 20 սմ. բարձրությամբ) կամ ան-
շարժ խոչընդունի վրայից (առվակ, ջրանցք), վոտները միաժամա-
նակ կտրելով գետնից:

Մադլել յերեխայի հասակի բարձրության ցանկարանի վրա-
յով:

Գնդակը գցել և բռնել 1½ մետր տարածության վրա:

Մեծ գնդակը խփել պատին կամ հատակին և բռնել:

Գնդակը 2 մետր տարածության վրա գցել հորիզոնական ուղ-
ղություն ունեցող թիրախ (արկղ):

Գնդակը 2 մետր տարածությունից գցել ուղղահայաց թիրա-
խի (բարձրությունը հավասար յերեխայի բարձրացրած ձեռքի,
շափը՝ 20×30 սմ.) կամ ողակի միջով:

Շարժումներ կատարել ճեռքում առարկաներ լինելու ժամա-
նակ, պահպանելով հավասարակշռություն (ափսէններով կերա-
կուր, ջրամանով ջուր տեղափոխել):

Կանոնավոր բռնել և աշխատանքի ժամանակի ողտադորձել
մկրատը, մատախը, վրձինը, սղոցը:

Կոլեկտիվ շարժումներ կատարելիս ունենալ յերաժշտական,
լուսական և տեսողական աղղանշանների կողմնորոշում:

Կարողանալ կատարել բացատրած (ցույց չտված) վոչ բարդ
շարժումները:

Աշխատանիքի հիմնական բովանդակությունը

Կանոնավոր կերպով կատարել առողջապահական գործողու-
թյունները և ոեթիմի պահանջները:

Հեկափարի դրույցներն անհատական և հասարակական առող-

Հապահության, ռեժիմի առանձին պահանջների, պլոֆիլակտիկ միջոցառումների մասին (դրքեր և պլակատներ ոգտագործելով)։ Յերեխաների մասնակցությունն իրենց կյանքի կազմակերպման և առողջապահական պահանջների կատարման ստուգմանը (սահմանադրության բրիգադներ)։

Աղասի Խաղեր՝ համապատասխան նյութեր և իրեր գործածելով (գնդակներ, ողակներ, ցատկիչներ, սանձեր, գերան, ուղղահայց սանդուխք)։ Կազմակերպված շարժական խաղեր՝ կանոններով և թեթև կերպով մասնակցողների մեջ դերեր բաժանելով։

Յերաժշտա-ռիթմիկ պարամունքներ՝ մարմաժարզական տիպի տարրական վարժություններով։

Ամառ՝ ողի և արեի վաննաներ, լողանալ։
Զմեռ՝ բացոթյա խաղեր, սահնակ, դահուկ։

Բ Ա Ր Չ Բ Խ Ո Ւ Մ Ա

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՈՒՆՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնական խնդիր. — Յերեխաները պետք են ինքնուրույն կերպով կատարեն բոլոր հիմնական առողջապահական կանոնները և ռեժիմի պահանջները վոչ թե միայն մանկականարկում, այլև ընտանեկան կենցաղի պայմաններում։ այսպիսով՝ անհրաժեշտ ե յերեխաներին գիտակցել տալ առողջապահության նշանակությունը վոչ միայն անհատական, այլև հասարակական շահի տեսակետից, վորովհետև վերջին հաշվով հասարակական առողջապահությունն ե, վոր ապահովում ե յուրաքանչյուրի անհատական բարեկեցությունը։ Մրանից յերեխաները պետք ե սովորեն, վոր վոչ միայն իրենք պիտի կատարեն առողջապահական հիմնական կանոնները, այլև պիտի իրենց ըրջապատողներին ել կատարել տան։

Գործնականում յերեխաները պետք ե հետեւալ ունակությունները ձեռք բերեն։

Ինքնուրույն, ժամանակին և առանց առանձին հիշեցումների կատարել առողջապահական պատշաճ դործողությունները և անձնական առողջապահական կանոնները։ ոճառով լվանալ յերեսը, ձեռքերը, վիզը, ականջները, վոտքերը, վողողել բերանը, մաքրել ատամները։

Պարագմունքներից հետո կանոնավոր հալաքել բոլոր իրերն ու նյութերը, սենյակի ողը փոխել (ավելիուց հետո)։

Հետևել, վոր բոլոր ընկերները կատարեն առողջապահական բոլոր կանոնները և միջոցներ ձեռք առնել սանիտարական բացերը կերպնելու համար (անբրիգադայի աշխատանքը)։

Առողջապահական կանոնները կատարել վոչ միայն հիմնարկում, այլև տանը, ձգտելով, վոր ընտանիքի մյուս անդամներն ել կատարեն։

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՅԵՎ ԿՐՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հիմնական խնդիր. — Յերեխաները պետք ե տարրական հիմնական պատկերացումներ ստանան այն մասին, թե որպանիզմի վրա ի՞նչպես են ազդում զանազան անբարեհաջող պայմանները, վորոնց դեմ մենք պայքարում ենք առողջապահական միջոցառումներով։ Անհրաժեշտ ե յերեխաներին դիտակցել տալ հասարակական առողջապահության կարևորագույն պահանջները, և որհրդային իշխանության հիմնական միջոցառումներն այդ բնագավառում, և բերել այն համոզմանը, վոր անհրաժեշտ ե անձնագավառի կամաց ընդհանուրի առողջապահությունը հետո։

Գործնականում յերեխաները պետք ե ձեռք բերեն պատկերացումների հետեւալ պաշարը։

Գիտենալ քթի, աչքերի, ականջի, բերանի, տամների դերը և նրանց առողջապահության հիմնական կանոնները (չունչ քաշել քթով և վոչ բերանով, աչքերին ձեռք չտալ, աչքերը կեղտոտ թաշելինակով, գողնոցով, չորի փեշով չսրբել, ականջը չփորիբել, ատամները մաքուր պահել)։

Գիտենալ, վոր կանոնավոր մարսողության համար անհրաժեշտ ե թարմ և մաքուր կերակուր, վորը պետք ե ընդունել վորոշ ժամանակում։

Գիտենալ, վոր մեր որդանիզմը շարժողության և աշխատանքի պայմաններում վոչ միայն կերակը մեծ կարիք ե ունենում, այլև մեծ քանակությամբ ողի։ Այդ պատճառով ել վարժությունների, շարժական խաղերի և ֆիզիկական աշխատանքի ժամանակ պետք ե շնչել աղատ և խորը, վոչ մի դեպքում շնչառությունը չկանգնեցնել և չճնչել։

Գիտենալ, վոր ուտելուց, քնից անմիջապես հետո շարժական խաղերով, ֆիզիկական վարժություններով, ծանր ֆիզիկական աշխատանքով չի կարելի զբաղվել։

Գիտենալ, վոր փշացած, փոշոտ ողն առողջության համար վնասակար և և վոր բուսականությունն ողը մաքրում է:

Գիտենալ, վոր կեղտոտ աղբյուրները, վորոնցից գործածելու ջուր են վերցնում, տարափոխիկ հիվանդություններ են տարածում: Այդ պատճառով ել ավազանները պետք է մաքրուր պահել:

Գիտենալ, վոր տարափոխիկ հիվանդությունների դեմ պայքարելու համար պետք է հիվանդներին առողջներից զատել, յեթե տանը հիվանդ կա, մանկապարտեղ չդնալ և, վարակման աղբյուրները վունչացնելու համար, հիվանդի յեղած սինյակն ու իրերն ախտահանել:

Գիտենալ, վոր աշխատավորների առողջությունը պահպանելու համար, Խորհրդային իշխանությունը հիմնում է հանգստյան աներ, սահմառիաներ, հիվանդանոցներ, բուժարաններ, հասարակական ճաշարաններ վոչ միայն մեծերի, այլև յերեխաների համար:

ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնական խնդիր.— Սովորեցնել յերեխաներին կառավարել և կանոնավորել իրենց շարժումները թե՛ անհատական և թե՛ կոլեկտիվ շարժումների ժամանակ: Յերեխաները պետք է սովորեն կողեկտիվ կերպով գնահատել իրենց շարժումների վորակը և նվաճումները՝ անհատական և կողեկտիվ առաջարությունների ժամանակ: Շարժումների վորակի նկատմամբ, միջին խմբի համեմատությամբ, պահանջն այստեղ ավելանում ե՝ յերեխայի շարժողական ապարատի զարգացման և Փիղիկական հնարավորությունների բարձրացման հետևանքով:

Ի լրումն այն բոլորի, ինչ նշված ե միջին խմբի ծրագրում, սուաջ են քաշվում հետեւյալ խնդիրները.

Քայլելիս կանոնավոր կերպով ուղղվել և ձեռքերի շարժումները կատարել համաշպի:

Քայլվածքի տեմպը չխախտելով, քայլելիս կատարել ձեռքերի պարզ ոիթմիկ շարժումներ:

Քայլվածք վոտների թաթերի վրա:

Քայլվածքից հետզետե անցնել վաղքի և ընդհակառակը՝ համաձայն աղդանշանի կամ նվազակցության բնույթի:

Ինքնուրույն կերպով կազմել հատասյուն, զնուզասյուն, յեռա-

սյուն, քառասյուն և չարափոխվել պարզ ձևերի (քառակուսի, յեռանկյուն):

Զեավոր քայլք հատասյունով (քայլքի ընթացքում կազմել վոռոշ ձևեր — քառակուսի, յեռանկյուն, զիգզագներ): Քայլք սահմանափակ տարածության վրա (առարկաների արանքում)՝ չխառնվելով և իրար չըրելով:

Հավասարակշռության պահպանումը վաղքի կամ թոփչքի ժամանակ անակնկալ կերպով կանգ առնելլս. կարողանալ բռնվելուց խուսափել և բռնել վաղքի ժամանակ:

Քայլել նեղ նստարանի (15 սմ. լայնությամբ) կամ դերանի վրայով (մինչև 40 սմ. բարձրությամբ), պահպանելով հավասարակշռությունը:

Թոռչել պարանի վրայից (բարձրությունը մինչև 30 սմ.): Յատկել յերկարությամբ (մինչև 40 սմ.), թաթերը կանոնավոր դնելով:

Մագլցել ուղղահայաց սանդուխքով 2—3 մետր բարձրությամբ և անցնել անցքերով:

Մինչև 2 մետր տարածության վրա գցել և բռնել դնդակը:

Գնդակը թիրախին խփել (20×30 սմ. տրամադծով)՝ մինչև 3 մետր տարածության վրա:

Գնդակը գցել գեպի շարժվող թիրախը (խաղալիս). նետումներ հեռու տարածության վրա՝ ձեռքի ճիշտ թափով:

Վաղք առարկաներ բռնած, պահպանելով ձեռքերի տվյալ դրությունը:

Զեռքի շարժումների և կարողությունների զարգացումը՝ դորձիքներով աշխատելիս և ինքնասպասարկման ժամանակ:

Հիմնական շարժումների անունների կողմնորոշում և նրանց կատարումն ըստ հրամանի:

Կարողանալ ինքնուրույն կերպով կազմակերպել կանոններ ունեցող ծանոթ պարզ խաղեր (կազմակերպչական ունակություններ):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքնուրույն կանոնավոր կերպով կատարել առողջապահական գործողությունները և ոեժիմի պահանջները, ակտիվ կերպով մասնակցել իրենց կյանքի կազմակերպմանը և առողջապահական կենցաղի պահանջի կատարման ամենորյա ստուգմանը:

Աղասի խաղեր և սպորտ դվարձանքներ՝ ողտագործելով համապատասխան իրեր և նյութեր (մեծ ու փոքր գնդակներ, սանդուխք, շվեդական պատ, տախտակ, գերաններ և այլն):

Կանոններ ունեցող կաղմակերպմած շարժական խաղեր ավելացրդ գերաբաժանությամբ և կոլեկտիվ սոցմըցման տարրերով:

Յերաժշտառիթմիկ պարապմունքներ մարմաժարդական տիպի տաքրական վարժություններով:

Զբույցներ հասարակական և անհատական առողջապահության մասին մասին՝ սոցչինարարության և յերկրի պաշտպանության խնդիրների տեսանկյունով:

Եքսկուրսիա դեպի համապատասխան հիմնարկները. կաղմակերպմած պարապմունքների ընթացքում մշակել առողջության պահպանման, հասարակական առողջապահության, պլոտֆիլակտիկայի և յերկրի պաշտպանության խնդիրները:

Ամառը՝ արևի և ողի վաննաներ, լողանալ:

Զմեռը՝ բացոթյա խաղեր և սպորտ-վարժություններ (սղղանակական, դահուկ):

ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ – ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Բ Ա. Ց Ա. Տ Բ Ա. Կ Ա. Ն

Յերաժշտական – շարժողական աշխատանքը յերկու հիմնական մաս ունի — յերաժտություն և շարժողություն: Պարապելիս այս յերկու մասն ել սերտ կերպով կապված են իրար հետ. յերաժըշտության միջոցով յերեխաները կաղմակերպվում են շարժողության համար, իսկ շարժողության միջոցով՝ յուրացնում յերաժըշտությունը: Հետևանքն այն է լինում, վոր յերեխաները ձեռք են բերում կանոնավոր շարժողության ունակություններ և սովորում են հասկանալ յերաժշտությունը, հասկանալ յերաժշտական խոսքը՝ առանձնահատկությունները:

Բայց յերաժշտական – շարժողական աշխատանք տանելիս, մանկավարժը չպետք է միայն այդ հետևանքին ձգտի:

Յերբ յերեխաներին կանոնավոր շարժվելու ունակություններ ենք տալիս, մենք նկատի ունենք կոմունիզմի համար պատրաստելու առողջ, ճարպիկ, ամուր և առկուն փոխարինող մարտիկներ: Շարժողության առաջարրությունները կատարելիս, մեր յերեխաները ձեռք են բերում այնպիսի հատկություններ, վորոնք հարկավոր են ապագա կոմունիզմ կառուցողի համար: Յերբ յերեխաներին սովորեցնում ենք հասկանալ յերաժշտական խոսքը, մենք ձգտում ենք, վոր նրանց համար ամենամոտիկ լեզուն լինի պրոլետարական յերաժշտության լեզուն, ձգտում ենք մշակել նրանց մեջ դասակարգային յերաժշտական ճաշակ: Այդպիսով շարժողությունն ու յերաժշտությունը մեզ համար ինքնանպատակ չեն, այլ յերեխաների՝ կոմունիստական դաստիարակության միջոցներից մեկը:

Ներկայումս յերաժշտական ճակատում տեղի ունի դասակարգային սուր պայքար: Արդեն դիմակավերծ են արված այնպիսի հայտարարությունների դասակարգային եյությունը, վորպիսիք են. «յերաժշտությունը մաքուր արվեստ ե. նրա մեջ պրոլետա-

բիատին թշնամի իդեաները չկան և չեն կարող լինել», կամ «յերաժշտության մեջ արտահայտվում են այնպիսի զգացումներ, վորոնք ընդհանուր են բոլոր մարդկանց համար, այսուղև քաղաքականություն լինել չե՛ կարող»: Այսպիսի հայտարարությունների տակ ծածկվելով, մեր դասակարգային թշնամիներն ամեն մի յերաժշտական աշխատանքի մեջ կարող են մտցնել բուրժուական յերաժշտագետների և՝ յեկեղեցական (վորպես փառաբանող), և՝ թուլացնող (վորպես հանդստացնող), և՝ գինետան-քեֆի (վորպես ուրախ) յերաժշտությունը: Իսկ ի՞նչ հետեւանքներ կտա այդպիսի յերաժշտական աշխատանքը: Ահա՛ թե ինչպիսի. 1) պրոլետարական յերաժշտության լեզուն և անցյալից ժառանգություն մնացած բովանդակությամբ մեղ մոտիկ յերաժշտության լեզուն յերեխաների համար խորթ կլինի և 2) նրանց յերաժշտական ճաշկը կիշանա, այսինքն՝ յերեխաների մեջ հակում կառաջանա դեպի ընկած, մեղ թշնամի արվեստը: Յեկ այդպիսով խորհրդացն մանկապարտեկի ընդհանուր մանկավարժական աշխատանքի և յերաժշտական աշխատանքի մեջ անջատում կառաջանա:

Յուրաքանչյուր մանկավարժ զիտե, թե ինչ հսկայական աղդեցություն ե թողնում յերաժշտությունը յերեխաների վրա: Շարժողությունը, յերաժշտության նվազակցությամբ, ուժեղացնում է այդ աղդեցությունը: Յերաժշտական – շարժողական նյութի այս առանձնահատկությունները մանկավարժը պետք է հետեւյալ կերպով ողտադրծի.

1) Յայտուն և գեղարվեստական յերդերի, տոնական բեմադրությունների և խաղերի միջոցով, մանկավարժը պետք է խորացնի յերեխաների հետաքրքրությունը դեպի սոցիալիստական շինարարությունը: Յերաժշտական – շարժողական նյութը պետք է ողտագործել նաև վորպես միջոց՝ ամրացնելու ընթացիկ կրթական-դաստիարակչական աշխատանքի մի շարք ունակությունները (հաշվի և դրադիտության վերաբերյալ, գույները, աջ ու ձախ կողմերը տարբերելու և սանիտարական-առողջապահական յերգը):

2) Յերաժշտական – շարժողական նյութի միջոցով մանկավարժը յերեխաների մեջ առաջացնում է ակտիվություն և յերաժշտական-շարժողական ստեղծագործություն:

Այսպիսով նախարարուցական հիմնարկում յերաժշտական-շարժողական աշխատանքը ծավալվում է չորս հիմնական ուղղությամբ և նկատի ունի հետեւյալ չորս հիմնական խնդիրները.

1) Բնդհանուր մանկավարժական աշխատանքի գեղարվեստական ձեւավորումը և հոգական խորացումը, ուղղված դեպի նախադպրոցականի կոմունիստական դաստիարակության խնդիրների իրականացումը:

2) Դաստիարակել յերեխաների յերաժշտական ճաշակը, յերաժշտության ըմբռնման ընդունակությունները և պատվաստել մի շարք յերաժշտական ունակությունները:

3) Յերեխաների Փիլիկական զարդացումը և նրանց շարժության կազմակերպումը:

4) Բարձրացնել յերեխայի յերաժշտական-շարժողական հետքավորությունները:

Յերաժշտական-շարժողական աշխատանքը նախադպրոցական հիմնարկների ընդհանուր մանկավարժական աշխատանքի անհրաժեշտ և անբաժանելի մասն է:

Նախադպրոցական հիմնարկների աշխատանքներն ստուգելիս անհրաժեշտ և վճռական կերպով վերացնել այն բացերը, վորոնք հայտաբերվել են կենսակոմի՝ տարրական և միջնակարգ դպրոցի մասին վորոշման տեսանկյունով: Այդ բացերից մի քանիսը (յերեխաների խաղի գործունելյալթյան թերապնահատումը, Փիլիկական դաստիարակության թույլ դրամաճը և մանկավարժական աշխատանքի բավարար չափով հոգականությամբ հաղեցած չլենը) չեն կարող լրիվ վերացված լինել այն հիմնարկներում, ուր յերաժշտական-շարժողական աշխատանքը պարտադիր առարկա չի համարվում:

ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԳԱԲՄՆԱԿԱՆՈՒԽԵՐԸ ԻՐԱՋԱՌԾԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒԽԵՐԸ

Յեթե վերոհիշյալ խնդիրներից վորեկ մեկը մանկավարժի կողմից գերադահատվում, թերապնահատվում կամ աչքաթող և արվում, ապա յերաժշտական-շարժողական աշխատանքը լիարժեք չի լինում և այս հանդամանքն իջնում է հիմնարկի ընդհանուր մանկավարժական աշխատանքը:

Առաջին խնդիրը թերապնատելու դեպքում, ընդհանուր մանկավարժական աշխատանքը յերաժշտական-շարժողական աշխատանքի մեջ արտացոլվում է «մեծ տոներին» կամ այդ տոների համար նախապատրաստվելիս: Տոնից հետո յերաժշտական-շարժողական աշխատանքի բովանդակությունը բոլորովին անջատվում

Ե ընդհանուր մանկավարժական աշխատանքի բովանդակությունից, մինչև հաջորդ տոնը: Այդ ժամանակ յերեխաներին տրվում են չոր, ձեւական ունակություններ, վորից հիմնարկի մանկավարժական աշխատանքը տուժում է յերկու ուղղությամբ: 1) նվազում ե մանկավարժական աշխատանքի բովանդակության ցայտունությունը և հուղականությունը, դրա հետեանքով յերեխաների տպավորությունները չեն ամրանում բավարար չափով, ըմբռոնումները չեն խորանում և յերածշտական-շարժողական աշխատանքը չի ողտագործվում՝ կոմունիստական դաստիարակության ընդհանուր խնդիրների համար, 2) յերեխանները, վոր հետաքրքրված չեն իրենց մոտիկ, իրենց համար հասկանալի յերաժշտական-շարժողական աշխատանքի բովանդակությամբ, ունակություններն ել դժվար են ձեռք բերում:

Նույն առաջին խնդիրը գերազնահատելու դեպքում, մանկավարժը մշակվող թեմայի բովանդակությունը ծանրաբեռնում: Ե յերդերով ու խաղերով և դրա հետեանքով չի կարողանում թեման մշակել ինչպես հարին ե:

Ստացվում ե նույն հետեանքը, ինչ վոր առաջին դեպքում:

Յերաժշտական-շարժողական աշխատանքի վորակի թուլացում և առաջանում նաև այն դեպքում, յերբ մանկավարժը յերաժշտական - շարժողական պարապմունքների և ընդհանուր մանկավարժական աշխատանքի կապիտ մոտեցում և ունենում:

Յենթաղբենք, թե մշակվում ե «Հողամասի սարքավորումը» ձմռան զվարձանքի համար» կազմակերպող մոմենտը: Յերեխանները կարգի յեն բերում սառցե բլուրը, պատրաստում են սահնակներ և այլն: Ընդհանուր մանկավարժական և յերաժշտական-շարժողական աշխատանքի կոպիտ հասկացողությունը կայանում և նրանում, վոր մանկավարժը յերաժշտական-շարժողական պարապմունքների ժամանակ վերաբարդում ե հողամասի նախապատրաստման աշխատանքային պրոցեսներ — խաղեր՝ բլուրից չմուշկներով սողալ և այլն: Պարզ ե, վոր արյակիսի խաղեր յերեխաներին չեն վողերում, վորովհետեւ յերաժշտական-շարժողական պարապմունքների պայմաններում, աշխատանքային պրոցեսներ, ավելի ևս՝ խաղեր կատարել անհնարին ե (այն ել առանց համապատասխան առարկաների):

Հետեապես, մանկավարժի ցանկությունը — կազմակերպող մոմենտի բովանդակությունը ձեւավորել և խորացնել գեղարվեստութեն — կմնա անիրադորելի: Տվյալ դեպքում պետք ե կապել

ֆիդկուլտի կամ ձմռան զվարձանքի թեմայից բղխող յերդի հետ և կամ այն կազմակերպված խաղերի հետ, վոր մանկավարժը մշակում է յերեխաների հետ՝ բացովիյա կատարելու համար: Յեթե հողամասի սարքավորումը վերջանում է հանդիսավոր բացմամբ, չեֆարկյալ մանկավարտեղից հրավիրված ներկայացուցիչների մասնակցությամբ, ապա կարող ե տեղի ունենալ գրոշակ-ներով յերթ, չորհավորություններ և այլն:

ՆՅՈՒԹԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՄԵՋ

Ծրագրի մեջ նյութերը դասավորված են ըստ աշխատանքի հետեւյալ տեսակների — յերդ, խոսք, շարժում:

Ունակությունների զասավորման պարզության համար, շարժումներ և մարմնամարզական վարժություններ» և բ) «Շարքային և ձեւային շարափոխումներ»: «Բնական շարժումներ և մարմնամարզական վարժություններ» մասի «ունակություններ» սյունակում դրված են այն ունակությունները, վորոնք նպաստում են Փեղիկական զարգացմանը և առանձնապես յուրաքանչյուր յերեխայի շարժողության կազմակերպմանը:

«Շարքային և ձեւայիր շարափոխումներ» մասում դրված են այն ունակությունները, վորոնք ապահովում են յերեխանների կուլեկտիվ շարժումների կանոնափոր և համաձայնեցված լինելը: Յերկու մասում ել ունակությունները դասավորված են միատեսակ խմբերով: Որինակ՝ «ծափի», «քայլք» առաջին մասում, կամ «շըրջան», «սյուն մեկ-մեկ» յերկրորդ մասում (տես ստորին խմբի ծրագրերը):

Ծրագրում պահպանված ե հեշտից դժվարին անցնելու սկզբունքը: Սակայն սիսակ կլինի համոզել, վոր «քայլք» վերնադիրը կրող ունակություններ ձեռք բերելն ավելի դժվար ե այն պատճառով, վոր այդ մասը «ծափի» մասից հետո յե դրված և այդ պատճառով ել քայլքը պետք ե սովորեցնել ծափի ունակությունը ձեռք բերելուց հետո: Քայլքի և ծափի ունակությունները մշակվում են միաժամանակ, սկսելով պարզից և հետզետեւ անցնելով բարզին: Յերդի և շարժողության մշակման հիման վրա (յերաժշտական նվազակցությամբ), յերեխանները ձեռք են բերում յերաժշտական խոսքի կառուցվածքի կողմնորոշում: Այն գեպիքերում, յերբ վորեւ շարժողության կամ յերդի մշակումը

նպաստում ե յերաժշտական կողմնորոշումներ ձեռք բերելուն, այդպիսիները ցույց են տրվում «կողմնորոշումներ» գլխում, այդ ունակության համապատասխան համարով:

Բարձր խմբի ծրագրում ցույց են տրված վոչ միայն յերաժշտական, այլև այնպիսի շարժողական-ուսարածական կողմնորոշումներ, վոր յերեխաները ձեռք են բերել աշխատանքի պրոցեսի ընթացքում:

«Բովանդակություն» գլխում ցույց ե տրված յերաժշտական-շարժողական նյութի որինակելիք բովանդակությունը, վորի ողնությամբ ձեռք են բերվում յերեխաների ունակությունները և կողմնորոշումները:

Յերաժշտության ունակությունը, վորտես յերաժշտական-շարժողական աշխատանքի մի առանձին տեսակ, ծրագրի մեջ չի մտել: Այսուամենայնիվ, յերաժշտություն ունկնդրելու մոմենտները յերդի և շարժողական աշխատանքի անբաժան մասն են կաղմում (այն շարժողական առաջադրություններում, վորտեղ շարժությունը կապված է յերաժշտության հետ): Որինակ՝ չի կարելի յերեխաներին յերդ սովորեցնել, առանց նախորոք այդ յերգի յեղանակն ունկնդրել տալու:

Յերաժշտության ունկնդրությունը յերաժշտական - շարժողական նյութի մեթոդական մշակման կարևորագույն մոմենտն ե. առանց ունկնդրության յերեխաները չեն կարող ձեռք բերել յերաժշտական կողմնորոշումներ և յերաժշտական-շարժողական ունակություններ:

ԽՆՉՊԵՍ ՈԳՏՎԵԼ ԾՐԱԴՐԻՑ

Ամենից առաջ անհրաժեշտ ե ծրագիրը հարմարեցնել իր հիմնարկի պայմաններին: Որինակ՝ յեթե տվյալ՝ հիմնարկի բարձր խմբում առաջին տարին ե, վոր պիտի յերաժշտական-շարժողական պարապմունքներ տարվեն և վոչ յերրորդ տարին, առաջ աշխատանքը ե սկսել պարզ առաջադրություններից, որինակ՝ սոտորին խմբի ծրագրի վերջին առաջադրություններից: Պարզ ե, վոր բարձր խմբում այդ նյութի վրա յերկար կանգ առնել հարկավոր չե և շատ շուտով կարելի յե անցնել միջին խմբի ծրագրին: Ծրագրից չեղինել անհրաժեշտ ե և այն գեղքում, յերը աշխատանքը կատարվում ե այնպիսի խմբում, ուր զանազան հասակի յերեխա-

ներ կան: Այլպիսով ծրագիրն անփոփոխ ե մնում միայն առաջադրությունների հետզհետե բարդանալու տեսակետից:

Ծրագրից կանոնավոր կերպով ոգովիլը չի սահմանափակվում միայն տվյալ հիմնարկի համար ունակությունները և կողմնորոշումները սեղմելով կամ լայնացնելով. անհրաժեշտ ե պարզել, թե յերեխաները յերաժշտական-շարժողական աշխատանքն ի՞նչ չափով կարող են յուրացնել:

Յերաժշտական-շարժողական նյութի անհաջող ընտրությունը վոչ միայն չի նպաստում ունակությունների պատվաստմանը, այլ, ընդհակառակը, արգելակ ե դառնում յերեխաների առաջնաղացությանը: Այդ պատճենով ել նյութի ոգտագործման վրա պետք ե հատուկ ուշադրություն դարձնել:

Խաղերի և յերգերի թեմաներն ըստ հնարավորին պետք ե հարմարեցված լինեն այն թեմային, վորը տվյալ ժամանակաշրջանում մշակվում ե:

Մի քանի զեղերում թույլատրելի յե նաև վերացական (բեօբրազնայ) վարժությունների մշակում: Վարժությունների նշանակությունը մանկավարդի կողմից հաճախ թերազնահատվում ե, այլ ինչ, մի շարք ունակություններ ձեռք բերելու համար, վարժություններն անհրաժեշտ են. որինակ՝ փոքրիկների մոտ, վորոնք գեռևս զբաղված են իրենց շարժումները յերաժշտությանը հարմարեցնելու պրօցեսով, անպատկեր (բեօբրազնայ) մշակումը նախազգուշացնում ե նրանց հուզականությամբ ծանրաբեռնելու վտանգից:

Բարձր և միջին խմբերում առաջադրության անպատկեր մշակումը կարող ե կատարվել նաև հետեւյալ ձեռվ մանկավարժը յերեխաների առաջ դնում ե կնկնետ (վորոշակի) նպատակային առաջադրություններ՝ կապված մշակվող կազմակերպող մոմենտի հետ. որինակ՝ կրկնել մի հին խաղ, յուրացնել ձեային (Փիգурալյուօ). շարգածքը և սովորել ինքնուրույն կերպով կատարել, վորպեսզի ողնեն զեկավարին՝ անկազմակերպ յերեխաներին տոնակատարության համար պատրաստելու ժամանակ և այլն: Այս հանդամանքը յերեխաների մեջ առաջացնում ե յերաժշտական-շարժողական ունակությունները մշակելու և խորացնելու հետաքրքրություն:

Յերաժշտական-շարժողական առաջադրությունների անպատկեր մշակումն անհրաժեշտ ե տոների համար նախապատրաստվելու ժամանակ: Այդ ձեռի մշակումը զեկավարին հնարավորություն

և տալիս յերկար ժամանակ մաս առ մաս նախապատրաստել այն շարժողությունները, վորոնք հարկավոր են: Յերբ մանկավարժը ինչպես տեղի յե ունենում գործնականում, առնից շատ առաջ է սկսում «փորձել» բեմադրությունը, ապա մինչև յելույթ ունենալը յերեխաների մեջ թուլանում են բեմադրության սլատկերները և նրանք իրենց դերերը յելույթի ժամանակ կատարում են թույլ և առանց վոդկորության:

ՀԱՄԱԲՈՒՅՈՒՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՍՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Յերեխաներին պլանավորված, սիստեմատիկ կերպով առաջ տանելու համար, անհրաժեշտ ե, վոր յերաժշտական-շարժողական աշխատանքները կատարվեն սլարբերաբար, կազմակերպված սլարապմունքների ձևով: Այս ձևով պարապելիս մանկավարժի համար հեշտ ու հարմար կլինի աստիճանաբար բարդացնել յերաժշտական-շարժողական առաջադրությունները, յերեխաներին առաջ առաջադրությունները կատարելու կանոնավոր նախնական ունակությունները, մշակել և խորացնել իր խմբի՝ առանց բացառության բոլոր յերեխաների յերաժշտական-շարժողական ունակությունները:

Անհրաժեշտ են նաև, վոր մանկավարժը յերգեցողությունը և յերաժշտության նվազակցությամբ շարժումներն առաջադրությունը յերաժշտական-շարժողական կազմակերպված պարապմունքներից դուրս, յերեխաների խմբակային կյանքի մոմենտները կազմակերպելու համար: Որինակ՝ աշխատանքային յերգը կարող է վորպես միջոց ծառայել կազմակերպված ձևով կատարելու համար վորեւ աշխատանքային պրոցես: Վորքան շատ լինեն յերեխաների յերգի և շարժողության համար այդպիսի կարճատեմիցումները, այնքան յերաժշտական-շարժողական նյութը յերեխաների կենցաղի մեջ ավելի կլորանա:

Բավական չե, որինակ, կազմակերպված յերաժշտական-շարժողական պարապմունքների ժամանակ յերեխաներից պահանջվում է միայն, վոր նրանք ուղղի կանգնեն, քայլելիս չխոնվեն, առանց վիճելու և արագորեն սյուն կազմեն, առանց աղմուկի յերգին և այլն: Անհրաժեշտ ե, վոր մանկավարժը շարունակի ամրացնել այս ունակությունները նաև յերաժշտական-շարժողական պա-

թապմունքներից դուրս: Միայն այս դեպքում յերաժշտական-շարժողական նյութն իսկապես կարող է խօսացնել ընդհանուր մանկավարժական աշխատանքը, նպաստել իրազործելու նախադպրոցական հիմնարկի ուսումնական պատասխանական խնդիրներն ընդհանրապես և յերեխաների գեղարվեստական ու Փիղիկական դաստիարակությունը մասնավորապես:

Պարբերաբար կաղմակերպված յերաժշտական-շարժողական աշխատանքը միանդամեց չի սկսվում:

Յերգի և շարժողության համար խմբի կարճատեմ միացումները, վորոնց մասին մենք վերևում ասացինք, սկզբում ծառայում են վորպես յերաժշտական-շարժողական պարապմունքների նախաբան: Բարձր և միջին խմբերում կազմակերպված պարապմունքներին անցնելը սովորաբար շատ արագ ե կատարվում, որինակ խմբի պարապմունքներն սկսվելուց մի առանորյակ հետո, սուրբին խմբում՝ առաջին կազմակերպող մոմենտը մշակելուց հետո: Տեղողության ճիշտ նորմաների մասին խոսել չի կարելի. դա կախված է խմբի տարիքային կազմից, նրա Փիղիկական դրությունից, մանկական կունկալիվի կազմակերպվածության աստիճանից:

Կարելի յե նշել միայն որինակելի նորմաներ՝ մանկապարտեղի 3 հասակի խմբերի համար.

Ստորին խումբ — 10—12 րոպե (պարապմունքի 1-ին տարին)

Միջին » — 12—15 » (» 1—2 »)

Բարձր » — 15—20 » (» 1-ին »)

» » — 25—30 » (» 2-րդ »)

» — 30—35 » (» 3-րդ »)

Կազմակերպված յերաժշտական-շարժողական պարապմունքների ժամանակ յերգն ու շարժումները հաջորդում են իրար հետեւյալ կերպով.

1. Ներդրավող քայլք. այնպիսի շարժումներ, վորոնք յերեխաներին տալիս են մի շարք ունակություններ:

2. Մշակվող կազմակերպող մոմենտի կամ յերաժշտական-շարժողական առաջադրությունների հետ կապված յերգեր:

3. Ընդհանուր մանկավարժական առաջադրությունների հետ կապված խաղեր, աղատ խաղեր, կամ յերաժշտական-շարժողական առաջադրությունների հետ կապված խաղեր:

4. Յեղրափակման շարժումներ (թեթև, տարրական առաջարություններ):

ե տալիս յերկար ժամանակ մաս առ մաս նախապատրաստել այն-շարժողությունները, վորոնք հարկավոր են: Յերբ մանկավարժը՝ ինչպես տեղի յե ունենում գործնականում, տոնից շատ առաջ ու սկսում «փորձել» բեմադրությունը, ապա մինչև յելույթ ունենալը յերեխաների մեջ թուլանում են բեմադրության պատկերները և նրանք իրենց դերերը յելույթի ժամանակ կատարում են թույլ և առանց վողեորության:

**ՀԱՄԱԾԱՏՈՑ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ՇԱՐ-
ԺՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՑԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Յերեխաներին պլանավորված, սիստեմատիկ կերպով առաջ տանելու համար, անհրաժեշտ ե, վոր յերաժշտական-շարժողական աշխատանքները կատարվեն պարբերաբար, կազմակերպված ուղարակմունքների ձևով: Այս ձևով պարապելիս մանկավարժի համար հեշտ ու հարմար կլինի աստիճանաբար բարդացնել յերաժշտական-շարժողական առաջադրությունները, յերեխաներին այդ առաջադրությունները կատարելու կանոնավոր նախնական ունակություններ, մշակել և խորացնել իր խմբի՝ առանց բացառության բարոր յերեխաների յերաժշտական-շարժողական ունակությունները:

Անհրաժեշտ ե նաև, վոր մանկավարժը յերգեցողությունը և յերաժշտության նվազակցությամբ շարժումներն ուղարկործի մի շարք յերաժշտական-շարժողական կազմակերպված պարագաներից գործ, յերեխաների խմբակային կյանքի մոմենտները կազմակերպելու համար: Որինակ՝ աշխատանքային յերգը կարող ե վորպես միջոց ծառայել կազմակերպված ձևով կատարելու համար վորեւ աշխատանքային պրոցես: Վորքան շատ լինեն յերեխաների յերդի և շարժողության համար այդպիսի կարճատերեխաների կենցաղի մեջ ավելի կիսրան:

Բավական չե, որինակ, կազմակերպված յերաժշտական-շարժողական պարագաների ժամանակ յերեխաներից պահանջել պահանջելու և արագորեն սյուն կազմեն, առանց աղմուկի յերգին և այլն: Անհրաժեշտ ե, վոր մանկավարժը շարունակի ամրացնելը ունակությունները նաև յերաժշտական-շարժողական պա-

թապմունքներից դուրս: Միայն այս դեպքում յերաժշտական-շարժողական նյութն իսկապես կարող ե խօրացնել ընդհանուր մանկավարժական աշխատանքը, նաևստեղ իրադործելու նախադպրոցական հիմնարկի ուսումնա-դաստիարակչական խնդիրներն ընդհանրապես և յերեխաների գեղարվեստական ու Փիզիկական դաստիարակությունը մասնավորապես:

Պարբերաբար կազմակերպված յերաժշտական-շարժողական աշխատանքը միանդամից չի սկսվում:

Յերգի և շարժողության համար խմբի կարճատեղ միացումները, վորոնց մասին մենք վերևում ասացինք, սկզբում ծառացում են վորպես յերաժշտական-շարժողական պարագաներների նախաբան: Բարձր և միջին խմբերում կազմակերպված պարագաներներին անցնելը սովորաբար շատ արագ ե կատարվում, որին ականք խմբի պարագաներներն սկսվելուց մի տասնորյակ հետո, ստորին խմբում՝ առաջին կազմակերպող մոմենտը մշակելուց հետո: Տեղողության ճիշտ նորմաների մասին խոսել չի կարելի. դա կախված է խմբի տարիքային կազմից, նրա Փիզիկական դրությունից, մանկական կոլեկտիվի կազմակերպվածության աստիճանից:

Կարելի յե նշել միայն որինակելի նորմաներ՝ մանկապարտեղի Յ հասակի խմբերի համար.

Ստորին խումբ — 10—12 րոպե (պարագաների 1-ին տարին)

Միջին Յ — 12—15 Ր (՝ 1—2 Ր)

Բարձր Ճ — 15—20 Ր (՝ 1-ին Ր)

Ճ Ճ — 25—30 Ր (՝ 2-րդ Ր)

Ճ Ճ — 30—35 Ր (՝ 3-րդ Ր)

Կազմակերպված յերաժշտական-շարժողական պարագաների ժամանակ յերգն ու շարժումները հաջորդում են իրար հետեւյալ կերպով.

1. Ներդրավող քայլը. այնպիսի շարժումներ, վորոնք յերեխաներին տալիս են մի շարք ունակություններ:

2. Մշակվող կազմակերպող մոմենտի կամ յերաժշտական-շարժողական առաջադրությունների հետ կապված յերգեր:

3. Ընդհանուր մանկավարժական առաջադրությունների հետ կապված խաղեր, աղատ խաղեր, կամ յերաժշտական-շարժողական առաջադրությունների հետ կապված խաղեր:

4. Յեղափակման շարժումներ (թեթև, տարրական առաջադրություններ):

ԾՐԱԳԻՐ

ՍՏՈՐԵԿ ԽՈՏՄՈ

Յ Ե Բ Գ

Կողմնօրոշումներ : Դաշնամուրի նվազած նախաբանից ճանաչել յերդը : Ճանաչել առանց բառերի յերգած կամ առանց նվազակցության նվազած յերդի յեղանակը :

Ունակություններ : Յերգել յերդի վերջին յերաժշտական ֆրազը, յերդի թեթև կտորները : Խմբական յերգեցողություն՝ առանց զեկավարից հետ մնալու : Խմբական ինքնուրույն յերգեցողություն (առանց զեկավարի ողնության) : Խմբական ինքնուրույն յերգեցողություն (թեթև յերգերի), յեղանակի ճիշտ արտահայտությամբ (առանց զեկավարի ողնության) :

Յ Ո Ս Գ

Ունակություններ : Զայնանմանեցում : Կուեկտիվ կերպով արտասանել կարճ ֆրազներ, պարզ, հասարակ ոիթմով :

Բովանդակություն : Խաղի ժամանակ ձայնը նմանեցնել զեկավարի ձայնին (շողեշարժ—տո՞ւ—տո՞ւ, աքաղաղ—կի՛լլի՛կի՛, կատու—մյա—ո՞ւ և այլն) :

ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ՏԻՊԻ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ՅԵԼ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յ Ա Փ Մ Ա Լ

Կողմնօրոշումներ : Յերաժշտական տեմպի, ձայնի ուժեղության, հասարակ տեմպի կողմնօրոշում :

Ունակություններ : Յերգելու միջոցին ծափ տալ և կանդ առնել համաձայն նշանի : Հեկավարը յերգելու ժամանակ ծափ տալ բարձր ու ցածր, ա) զեկավարի նշանի համաձայն, բ) առանց զեկավարի նշանի : Յերաժշտությունը դադարելիս, առանց զեկավարի նշանի, ծափը դադարեցնել : Յափ տալ ոիթմով :

Ք Ա Յ Լ Ֆ

Կողմնօրոշումներ : Տեմպի և ձայնի ուժի կողմնօրոշում :

Ունակություններ : Քայլել զեկավարի յերգեցողության տակ բարձր և հանդարտ քայլք : Քայլք՝ վոտները համեմատարար ա-

վելի բարձրացնելով : Քայլքի և ձեռքերի շարժումների տարրական համաձայնեցում :

Բովանդակություն : Խմբի կազմակերպված տեղափոխվելը միսենյակից մյուսը՝ յերաժշտական-շարժողական պարագայունքները : Կազմակերպված յերաժշտական-շարժողական պարագայունքները նախալարաստող վարժություններ : Նախալարաստական վարժություններ (այնքան կամաց դնալ, վորվունաձայն չլսվի) : «Մուկ ու կատու» խաղալիս կամաց քայլել : «Կարմիր բանակ» խաղալիս՝ ա) յերթ գրոշակներով, ուժեղ նվազի ժամանակ դրոշակը բարձր բռնել և թափահարել, իսկ մեղմ նվազի ժամանակ՝ ցածրացնել :

Պիոներ խաղի ժամանակ սովորել քայլել :

Վ Ա Պ Ֆ

Կողմնօրոշումներ : Տարբերել արագ տեմպը հանդարտ տեհմություն :

Ունակություններ : Վաղք. ա) առանց յերաժշտության, բ) յերաժշտությամբ, գ) փոխ առ փոխ վաղք և քայլք :

Բովանդակություն : Խաղալ «Զի-ձի» և «Գնացք» :

Հավասարակշռություն

Ունակություններ : Քայլելիս անսպասելի կերպով կանդ տոնել ա) հրամանով, բ) յերաժշտության դադարեցմամբ : Քայլք սահմանափակ տարածության վրա (յերկու զծի մեջ յեղած 20 ոմ. լայնություն ունեցող տախտակի վրայով) :

Բովանդակություն : Փոխադրության ձևերի խաղ («Աշտո», «Զի-ձի»), խաղ «Գնացք» (կամուրջ, ոնչսեր—հատակին կավճով քաշած զծեր) : Վարժություններ գեղի հողամասը կատարած դրուսնքի ժամանակ :

ՇԱՐԺԱՅԻՆ ՅԵԼ ԶԵՎ ԶԵՎԱՎԱՐ ՇԱՐԱՓՈԽՈՒՄ

Ի Բ ՄԵՋ Գ Մ Ա Լ

Մենյակում քայլելոց հետո, գտնել իր աթոռը, վորի վրա նստած եր : Շըջանի չուրչը քայլելուց հետո գտնել իր տեղը շրջանում :

Բովանդակություն : ա) խաղ «Իր տունը»—զնում են տուն,

բ) «Բանվորներ» խաղալիս գնում են իրենց մեքենաների մոտ և հետո՝ առևն : Պարելուց հետո գտնում են իրենց տեղը շրջանում :

Հաստայում կազմել

Ունակուր-յուններ : Տեղում կազմում են հաստասյուն—ա) ղեկավարի ողնությամբ, բ) ինքնուրույն կերպով : Սյունն ուղղել առջում և քայլելուց հետո : Սյունը պահպանել սենյակի պատի յերկարությամբ քայլելիս :

Ծ ր ջ ա ն

Ունակուր-յուններ : Զեռքերը բռնած շրջան կազմել—ա) ղեկավարի ողնությամբ, բ) ինքնուրույն կերպով : Շրջանի լայնացումն ու նեղացումը : Շարժվել ըմջանի շուրջը ղեկավարի ողնությամբ :

Շարափոխումներ

Ունակուր-յուններ : Շրջանից սյուն կազմել (մեկ-մեկ) և հակառակը :

Բովանդակուր-յուն : Պարելուց հետո անցնել կազմակերպված հանդստացնող քայլքի, ըբջանային խաղից՝ քայլքի :

Զ ո ւ յ գ ե ր

Ունակուր-յուններ : Քայլել զույգ-զույգ (զույգ և կանգնեցնում ղեկավարը), վագել զույգ-զույգ :

Բովանդակուր-յուն : Խաղ «Մանկավարտեղ» — գնում են զրահանքի : Խաղ «Զի-ձի» սանձերով :

Առարկաներ

Յերաժշտական-շարժողական աշխատանքի համար ստորին խմբում պետք են լինեն հետևյալ առարկաները .

1) Թմբուկի—առանց յերաժշտության թմբկահարելու համար .
2) Դրոշակներ—ուժեղ և թույլ յերաժշտության վարժություններ կատարելու համար .

3) Սանձեր—«Զի-ձի» խաղալու համար :

4) Գնդակ :

Մ Ի Զ Բ Ե Խ Ո Ւ Մ Բ

Յ Ե Բ Գ

Կողմնօրոշումներ : Յերդի պրիմիսիվ յերաժշտական կատարման, ձայնի ուժի կողմնորոշում : Յերաժշտական ֆրազայի կողմնորոշում :

Ունակուր-յուններ : Յերդել առանց աղաղակի : Յերդել Փրազներով (մի Փրազը յերդում եղեկավարը, մյուսը՝ յերեխաները : Յերդել քառյակներով (մի քառյակը յերդում եղեկավարը, մյուսը՝ յերեխաները) : Ճիշտ յերդել յեղանակը . ա) նախ՝ 3—5 չորդուց բաղկացած խմբերով, բ) անհատական, ղեկավարի ողնությամբ, դ) ինքնուրույն, առանց ղեկավարի ողնության :

Խ ո ս գ

Ունակուր-յուններ : Ճիշտ արտասանել գրական բնագիրը (առանց բառերն աղաղակելով) : Կարճ լողունքների կոլեկտիվ արտասանություններ : Կարճ վոտանավորների կոլեկտիվ արտասանություններ :

Բովանդակուր-յուն : Սովորած բոլոր յերդերը :

ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՄԱՐՄՆԱՄՄՁԱԿԱՆ ՏԻՊԻ ՎԱՐԺՈՒՄՆԵՐ

Ք ա յ լ գ

Կողմնօրոշում : Յերաժշտական ձև (ֆորմա) :

Ունակուր-յուններ : Քայլելիս կանոնավոր կերպով ուղղվելու առարեւը . ա) զլուկը չկախել, բ) մեջքն ուղիղ պահել : Քայլել անշուրում և անդից : Քայլելուց հետո կանգ առնել—ա) աղղանցանով, բ) յերաժշտական ֆրազայից հետո, քառյակից հետո : Քայլելիս յետ դառնալ . ա) աղղանցանով, ֆրազայից, քառյակից հետո : Քայլը ձեռքերը զանազան գրությամբ պահպան, ղեկավարի ասելով և առանց դրան :

Բովանդակուր-յուն : Յերաժշտական պարագմունքների առաջն մասի վարժությունները, պարագմունքների համար նախապատրաստություններ : ա) խաղալ «Փողոց» — վոտքով գնացողներն ըստ աղղանցանի կանգ են առնում, բ) քայլել յերդելով : Խաղալ «Կարմիր բանակ» : Զեռքերը շարժել դեպի կողմերը, մեջքը և

վերև : Յարժումը փոխել 5—6 քայլեց : Յերաժշտական պարապ-
մունքների վերջում յեղափակող հանդստացնող վարժություն-
ներ :

Ա ա զ ֆ

Կողմնօրոշումներ : Յերաժշտության արագացում :

Ունակություններ : Վաղք տեղում և տեղից—ա) աղբանչա-
նով, բ) յերգով : Քայլքից վաղքի անցնելը :

Բովանդակություն : Խաղալ «Զի—ձի», «Սալառնակ», «Փո-
ղոց» : Լիցքի նախապատրաստություն, խաղալ «Հեծելազոր»,
«Քնացք» :

Թ թ ի չ ֆ

Կողմնօրոշումներ : Աիթմի կողմնօրոշում :

Ունակություններ : Դարձ քայլելիս 2 վոտքերի վրա թուչելով :
Վոտայուններ աեղում, վոտներն իրարից հեռու և ընդհակառակը՝
վոտներն իրար կացրած, տեղում փոխ առ փոխ վոտներն առաջ
դնելով :

Հալասարակշուրթյուն

Ունակություններ : Քայլելուց հետո կանդառնել յերկու վոտ-
քի վրա : Քայլելուց հետո կանդ առնել մի վոտքի վրա :

ՇԱՐՔԱՅԻՆ ՑԵՎ ԶԵՎԱՎՈՐ ՇԱՐԱՓՈԽՈՒՄ

Ս յ ո ւ ն

Կողմնօրոշումներ : Յերաժշտական ձևի կողմնորոշում :

Ունակություններ : Հատայուն կաղմել ըստ հասակի—ա) ա-
րագ, հաշվելով, բ) առանց խոնդելու ուղղվել ծոծրակի ուղղու-
թյամբ :

Սյունից տողան կաղմել՝ աջ ու ձախ դառնալով : Սյունից
մեկ—մեկ բաժանվել և մանր սյուներ կաղմել : Զույգ սյունից
կաղմել հատայուն և ընդհակառակը—1) տեղում կանդնած,
2) քայլելիս : Զույգերը դեպի աջ ու ձախ բաժանվեն պատի յեր-
կարությամբ և վերադառնալով զույգեր կաղմեն :

Բովանդակություն : ա) Մինչեւ 5 համբանքի տակ՝ յերդի նա-
խերդանքի ընթացքում, բ) յերկու դիմ—սոցքը մամբ թե—ո՛վ ե
ալիկի լավ : Խաղ . ա) Հարվածային բրիգադ—կոչ աշխատանքի
համար, բ) պիոներներ—տագնապ ճամբարում :

Շ ր ջ ա ն

Կողմնօրոշումներ : Յերաժշտական Փրազա :

Ունակություններ : Սյունից շարափոխվել մանր շրջանների՝
տեղում կանգնած և շարժվելիս : Զույգերից շարափոխվել մի կամ
յերկու շրջանի :

Բովանդակություն : ա) Խաղալ դործարան — մեքենայի ա-
նիվները, բ) յերաժշտության տակ, յերաժշտական Փրազով կա-
տարել շարժում սյունի (ԿՈԼՈՆԻԱ) ներսում և շրջանի միջով :
բ) Զույգ կանգնել . ա) յերեսը դարձնել դեպի իր զույգը — հա-
րման յերեխայի ձեռքը բոնելով շրջան կազմել, բ) մեջքը դարձ-
նել դեպի իր զույգը — 2 շրջան ձևային շարափոխում տոնի հա-
մար :

Ո ճ ա շ ա ր ժ

Ունակություններ : Ոճաշարժ—ա) առարկաների արանքով,
բ) յերեխաների արանքով :

Ա Ռ Ա Ր Կ Ա Ն Ե Բ

Միջին խմբում յերաժշտական պարապմունքների մեջ մտցվում
են հետեւյալ առարկաները — զբոշակներ — պիոներ խաղալիս,
այներին, ցուցադրումներին, ձեռային շարժումների ժամանակ :
Այսուներ — տեղափոխություն առանց յերաժշտության և յերա-
ժշտությամբ կարողանալ կամաց դնել հատակին : Խաղի համար
անհրաժեշտ առարկաներ . խորանարդներ, զանդակներ, մուրճեր
և այլն : Թմբուկ — պիոներ, կարմիր բանակ խաղալիս — յերդի
ոիթմը մշակելիս : Զողիկներ — կարմիր բանակ խաղալիս : Զան-
դակ—առարկան կամաց իրար տալիս, վրալիս ազդանշան :

Ռ Ա Ր Ձ Բ Ի Ա Ռ Ա Ր Ը

Ց է թ Գ

Կողմնօրոշումներ : Յերգի տարրերի կողմնօրոշում . յեղանա-
կը և բառերը : Բարձր ու ցածր յերաժշտություն : Յերաժշտու-
թյան արագացումը և ընդհապեցումը : Յերաժշտական Փրազա,
ձև : Յերաժշտության ուժեղացում և մեջքացում :

Ունակություններ : Յերգեցողություն առանց բառերի : Բարձր
և ցածր յերգեցողություն՝ յերգի յերաժշտական և բառական բո-

վանդակությամբ։ Յերգի արագացումը և դանդաղեցումը։ Յերգեցություն Փրազներով կարողանալ ժամանակին սկսել յերգը։ Յերգի ուժեղացումը և մեղմացումը, կարողանալ աստիճանաբար ուժեղացնել և մեղմացնել յերգը։ Յերգի գեղարվեստական մշակումը։ Անհասանական յերգոցողություն—ա) կարողանալ յերգն սկսել, բ) կարողանալ մենակ յերգել ամբողջ յերգը։

Խ Ո Ս Ք

Կողմնօրոշումներ։ Կանոնավոր արտասանություն։

Ունակություններ։ Լոգունդների կոլեկտիվ արտասանություն՝ բառերի բնական ոիթմոլ։ Յերգելիս բառերի պարզ արտասանություն։ Կարողանալ ծանր յերգեցողությունից անցնել արագ յերգեցողության՝ բառերի պարզ արտասանությամբ։ Կոլեկտիվ գեղամացիս՝ յերեխաներին բաժանելով խմբերի։

ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՄԱՐՄԱՐՄԱՐԶԱԿԱՆ ՏԵՍԱԿԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք Ա Յ Լ Ֆ

Կողմնօրոշումներ։ Քայլելու տեխնիկան։

Ունակություններ։ Կանոնավոր քայլք—ուղղվել։ ա) քայլելու ձեռքերի կանոնավոր շարժումներ, բ) քայլել առանց մեջքը կորացնելու, գ) առանց զլուկն իջնելու, դ) առանց վոտքերը դեսնին քսելու։

Բովանդակություն։ Լիցքի նախապատրաստություն։

Վ Ա Գ Ֆ

Կողմնօրոշումներ։ Քայլքի և վաղքի տեխնիկան։ ա) վաղքի տարբերությունն արագ քայլելց, բ) զանազան տեմպեր, գ) վաղքի արագացումն ու դանդաղեցումը։ Վաղքի տեսակները — վաղքի տեխնիկայի տեսակները։ Յերաժշտական Փրազա։

Ունակություններ։ Վաղքի զանազան տեսակները։ ա) վաղելինչպես գնդակ—գետնից հրվելով, բ) թեթև, մանրաքայլ վաղք, գ) կարուկ վաղք, ծնկները բարձրացնելով։ Կարողանալ քայլելց աստիճանաբար անցնել վաղքի և լնդհակառակը։ Դարձ վաղքի ժամանակ (առանց կանգ առնելու)—ա) ըստ աղղանշանի, բ) ըստ յերաժշտական Փրազի։

Բովանդակություն։ Վարժություններ։ ա) սովորական քայլք—արագ քայլքի անցնելը (յերկու անգամ արագ), բ) սովորական քայլք—արագ քայլք և վաղք, գ) արագ քայլք և սովորական քայլքի անցնելը, դ) խաղ «Զի-ձի», է) «Սավառնակ», ղ) հեծելազոր, ի) վաղք լիցքային մարմնամարզությամբ, լ) բեմադրություններ տոներին, թ) պարեր։

ՀԱՎԱՍԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ

Ունակություններ։ Անսպասելի կերպով կանդ առնել վոստուններից հետո—ա) մի վոտի վրա, բ) յերկու վոտի վրա—մի գծի վրա դրված։

Բովանդակություն։ Խաղ «Փողոց»—«Ավտոմոբիլ»—արդելակ։

Մարմնավարժական տեսակի վարժություններ

Կողմնօրոշումներ։ Աջ ու ձախ ձեռք։ Մարմնի կողմերը։

Ունակություններ։ Մարմնամարզական վարժություններ — առև Փիզդաստիարակության ծրագիրը։ Աջ ու ձախ ձեռքերի հերթական շարժումներ՝ զեկավարի առաջադրությամբ։ Հեշել շարժումների հետևողականությունը և կատարել հիշողությամբ։ Դարձումներ տեղում — աջ ու ձախ։ Զեռքերի և վոտքերի պարզ շարժումների համաձայնեցում։

Բովանդակություն։ Շարժումների բանավոր թելադրություն Եկավարի ցուցումներով—ձեռքերով։ որինակ՝ ձեռքերն առաջ, կողմ, կրծքի առաջ, ցած։ Շարժումների բարդ թելադրություն։ որինակ՝ աջ ձեռքը դեպի բարձր, ձախն առաջ, աջը կրծքի առաջ, ձախը՝ կողմ։ Զոկտեմբերիկ դառնալու նախապատրաստություն։ Կարմիր բանակ և պիոներ խաղալիս շարքային վարժություններ։ աղատ պարի շարժումներ, պար, գործարան խաղալիս—մեքենաների շարժումներ։

ՇԱՐՔԱՅԻՆ ՅԵՎ ԶԵՎ ԶԵՎԻՑԻՆ ՇԱՐՎԱԾՔՆԵՐ

Կողմնօրոշումներ։ Կողմնորոշումներ կոլեկտիվում։ Աջ ու ձախ կողմեր։ Տարածության ուղղությունների կողմնորոշում։

Ունակություններ։ Կարողանալ առանց զեկավարի ողնության այսուն կաղմել—մեկ—մեկ, յերկու—յերկու, յերեք—յերեք, չորս—չորս։ Շարափոխումներ ոյսինից մեկ—մեկ, յերկու—յերկու, չորս—չորս։ աջ ու ձախ կողմը բաժանելով։ Ծանոթ ձևերի շարափոխում։

քառակուսի, յեռանկյուն (զույգեր), շրջան: Յերկու խմբերի միաժամանակ շարժումներ՝ զանազան ձևավոր շարվածքով: Կուվարի բարդ դերը, յերբ անսպասելի կերպով կանչում և ղեկավարը: Կարողանալ շարժվել փոքրիկ տարածության վրա, իրարչներով, տեղերի փոփոխություն՝ առանց խոնդելու և կոլեկտիվ ձևային շարվածքը խախտանու:

Բռվանդակուրյուն: а) Սյունի շարափոխումը հատասյունի, ապա դույգ-դույգ, հետո չորս-չորս և ընդհակառակը, շարժվելու և տեղում, բ) հատասյունից սյուն կազմել յերեք-յերեք, չորս-չորս, գ) քայլք սյունով յերեք-յերեք, չորս-չորս, դ) շարքերի հերթական շարժում:

ա) Սյունից մեկ-մեկ բաժանվում են աջ ու ձախ և սենյակի մեջտեղում միանում յերկու-յերկու, բ) սյունից յերկու-յերկու բաժանվում են և միանում, հատասյուն կազմում:

Վարժություններ: ա) Մեծ ու փոքր շրջաններ, քառակուսիներ, բ) հաջորդաբար կատարել ձևային շարափոխումներ—շրջան, քառակուսիներ, «ձաշարժ» ըստ ղեկավարի ցուցմունքի ձևային շարափոխումներ տոնի համար:

Վարժություններ: Մի խումբ հատասյուն, մյուսը՝ շրջան և այլն—պատրաստություն տոնի համար:

Խաղ «Փողոց»—առանց իրարի հրելու. յուրաքանչյուրը զնում է վորոշությամբ. խախտողը խաղից դուրս և գալիս: Տեղափոխություն 2 տողաններից—համաձայն ղեկավարի կոչի, ըստ աղջանանի, ըստ յերաժշտական ֆրազի: Տողանների շարժումներն իրար հանդեպ ու յետ և ըստ աղջանանի տեղերը փոխելը:

ԱՌԱՐԿԱՆԵՐ

Նույնը, ինչ վոր միջակ խմբում:
Ռիթմիկ շարժումների բարդացում:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Բ Ա. Ց Ա Ր Ա Կ Ա Ն

Կերպարվեստի նշանակութՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՅԱԿԱՆԻ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻՄՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՍՏԵՄԻ ՄԵԶ

Կերպարվեստը կաղմված է յերկու մոմենտներից. ա) յերեխայի կողմից կերպարվեստի նյութի գեղարվեստական ընդունում — եստետիկ առարկաներ, եստետիկ սարքավորում, կերպարվեստական ստեղծագործություններ (նկարներ, պլակատներ, նոր ճարտարապետություն, արձաններ և այլն) ու բ) մանկան սեփական կերպարվեստական ստեղծագործություն: Թե՛ առաջինը և թե՛ յերկրորդը հանդիպանում են յերեխայի դասակարգային, կոմունիստական դաստիարակության հղոր միջոցը:

Կենցաղում կերպարվեստի լավ ընտրված նյութը, շրջապատող միջավայրում յերեխաններին մատչելի հեղափոխական հերոսության, պայազարի և հաղթանակի, ինտերնացիոնալ թեմաներով լավ ընտրված նկարները, պլակատները, գրքույկ-նկարները, լուսանկարները և այլն՝ սոցշինարարության նոր գիղանտների, նոր կենցաղի թեմաներով, կարմիր տոների հասկանալի և հետաքրքրական նյութերը, հուղական և տեսողական պատկերների միջոցով խորը կերպով աղջում են յերեխայի վրա:

Կերպարվեստի կառուցողական նյութերի ոգնությամբ յերեխան՝ զարգացնում է իր ստեղծագործական յերևակայությունը և կոնստրուկտիվ մտածողությունը, հասնում է շինարարական ստեղծագործության ու տեխնիկական գյուտարարության:

Կերպարվեստի աշխատանքի մեջ ստեղծագործարար գործադրելով բաղմաղան նյութեր և հասարակ զործիքներ, յերեխան հասկանում և նրանց հատկությունը, տիրապետում նրանց և սովորում ողտաղործել:

Կերպարվեստի աշխատանքը, հատկապես կոնստրուկտիվ աշխատանքը, կոլեկտիվիդմի սկզբունքներով կաղմակերպելով (աշխատանքի բաժանում, փոխադարձ որդություն), մենք զաստիտակում ենք կոլեկտիվ ունակություններ, վորի հետևանքով յերեխանները սովորում են աշխատանքը կաղմակերպել սոցիալիստական մեթոդներով:

Մանկակարգի կողմից կերպարվեստի նյութի աշխատանքի

ճիշտ կաղմակերպումը յերեխային սովորեցնում և նյութը տնտեսաբար ոգտագործել, իր ուժերի համեմատ աշխատանքը պլանավորել և հաշվառում կատարել:

Կերպարվեստի աշխատանքը զարդացնում է յերեխայի վողջորդանիքմը, նրա մոտորական ու տեսողական կողմնորոշումները և ունակությունները, շարժումների նպատակահարժարություննու ու ճարպիկությունը, աչքաչափի ճշությունը. յերեխան կարողանում է ճանաչել ձեւերը, մեծությունները, գույները և այլն:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՄ

Յերեխայի փորձը կարող է ճեակերպվել—ա) հարթության վրա (նկար թղթի, կտորի վրա) մատիտով, գույներով. բ) ծավալային ձեռվագնդակալործություն (ծեփվածք կալից, ճյունից և այլն) և գ) կոնստրուկտիվ ձեռվագնդական թանապան թափթիուկ նյութերից, բնական նյութերից և այլն):

Սովորաբար կարծում են՝ թե կերպարվեստը միայն նկարչությունն է և մի քանի գեակըում ել՝ ծեփելը: Սա ճիշտ չէ: Կերպարվեստի սիստեմությունը հանդեցնում է կերպարլեստական դրույներության աղքատության: Կոնստրուկտիվ նյութերը բացակայում են կամ թե տրվում են պատահարար: Մանկան ստեղծագործական նախաձեռնությունն ոգտագործել չկարողանալ աշխատանքը դարձնում է տիսուր և տաղտկալի:

Նկարչությունն ի չարն են գործադրում: Նկարչությունը հաճախ գործադրում են ժամանակը լրացնելու համար, վորովհետեւ նյութ չեն ունենում:

Յերբեմն մանկավարժը չափաղանց շատ առաջադրություններ է տալիս: Այս դեպքում հաճախ մանկավարժը հաշվի չի առնում մոչ յերեխաների հետաքրքրությունը և վոչ առաջադրությունների դժվարությունները:

Անշուշտ, այս տեսակի մանկավարժությունը յերեխաներին հետամնաց և դարձնում: Այլելի պասսիվ յերեխաները յենթարկվում են առաջադրություններին և բոլորովին կորցնում սեփական նախաձեռնությունը: Նրանք, ամեն անդամ մատիտը վերցնելիս, սպասում են մանկավարժի պատվերին: Մանկավարժը վոչ միայն խոսում, այլև հաճախ աշխատում է յերեխաների փոխարեն, մանավանդ ցուցահանդեսի համար նյութեր պատրաստելիս: Այդպիսի մեթոդների հետևանքով, շատ հիմնարկներում նկարները բովանդակությամբ լինում են աղքատ, ձեռվագնդույթը մեծած է, անդույնը:

Սրան պետք է ավելացնել և այն, վոր յերեխաները սովորաբար նկարում են ծայրերը կրծած մատիտներով՝ թղթի կտորների վրա: Շատ քիչ հիմնարկներ կան, ուր յերեխաները սիստեմատիկ կերպով դույներ են ոգտագործում: Նյութեր գտնելը դժվար է, առանձնապես թուղթ գտնելը, բայց այնուամենայնիվ մանկավարժի նախաձեռնությունից և նրա գեղի գործն ունեցած ուշադրությունից շատ բան է կախված:

Մանկավարժի վոչ-լուրջ վերաբերմունքը դեպի մանկան կերպարվեստական ստեղծագործական աշխատանքները տեղի յեւնենում նաև մանկական աշխատանքների վերաբերմությունը: Վոչնչացվում են վոչ միայն այն աշխատանքները, վոր դժվար է պահել, այլև նկարները: Նկարները մինչև անգամ չեն ոգտագործվում այլև նկարները: Մանկական յերեխաների առաջադրիմության համար: Մանկական յերեխաների առաջադրիմության համար: Համար մանկական նկարները մանկավարվեստական աշխատանքներն ու մանկական նկարները մանկական վարքի թանկապին փաստաթղթերն են: Այդ աշխատանքները մանկան վարքի թանկապին փաստաթղթերն են: Այդ աշխատանքներն ու նկարները վկայում են մանկան հետաքրքրության մասին, ցույց են տալիս յերեխաների անիմիկական ունակությունների առաջադարձացությունը, պատկերացումների հարուստ ու աղքատ լինելը (բարձր հասակի յերեխաների), հատկապես, յերբ նկարի բովանդակությունը դրի յեւ առնելած:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՅԻ-ԹՅՈՒՆԸ

Վորպեսպի կանոնավոր կերպով գասավորենք կերպարվեստի աշխատանքը, անհրաժեշտ և նկատի ունենալ նախադպրոցական աշխատանքը, ստեղծագործական զարդացման տարիքային կերպարվեստական ըմբռնման առանձնահատկությունները:

3—4 տարեկան յերեխայի համար հիմնական կենսական խնդիրը

3—4 տարեկան յերեխայի շրջապատող և առաջին հերթին նյութական միջավայրին: Անհրաժեշտ և գիտենալ առարկաների, նյութական միջավայրին: Անհրաժեշտ և գիտենալ առարկաների, նյութերի հատկությունը, վորպեսպի կարելի լինի ոգտագործել:

Պետք է ճանաչել ձեւերը, մեծությունները, տարածությունները, մանավանդ գույները և այլն: Սրա հետ միասին յերեխան պետք է վարժեցնի, ձայները և այլն:

3—4 տարեկան յերեխան իր բոլոր ուժերը: Ի՞նչ կերպով պետք է յերեխան իշղագացնի իր բոլոր ուժերը: Վոչ թե հայեցողությամբ, այլ ակրագործի այս խնդիրները. Վոչ թե հայեցողությամբ: Նա շարժվում է, փորձում է, ձեռք և տիրով գործունելությունը և դին է զցում, բարձրացնում է, դին է զցում, պտառմ է, խփում է և այլն: Նա հետախուզում է առանց արդյունքը նախատեսելու: Այդպի վրա ներքարձելով, յերեխան յերեխան է հանում նրա հատնությունները, նախաչում և տիրապետում այն: Այդպիս և վեր-

բերում յերեխան դեպի յուրաքանչյուր նոր առարկա, նոր նյութ, այդպիսի վերաբերունք ունի նաև դեպի կերպարվեստի նյութը:

Որինակ՝ Յ տարեկան յերեխան, առաջին անգամ մի կտոր կալ ստանալով, իսկույն սկսում է խփել տախտակին կամ կտրտել ու զնդակներ շնել: Մատիտ ու թուղթ ստանալով, յերեխան համարյա նույն և անում. նա փորձում է նկարել և, շարժման ուղղության համաձայն, ստացվում են սպիրալներ, կամ կետեր: Մեծ շարժումները գերակշռում են փոքր շարժումներին և մինչույն շարժումները ոիթմիկ (միատեսակ ըստ ժամանակի և շարժողության) կրկնվում են շատ անգամ (վարժություններ): Տվյալ մինչերպարվեստային (կամ կողմնորոշման) ժամանակաշրջանն առանձնահատուկ է կամ սյուժեությունը, կամ նրանով, վոր պատկերը վորոշվում է ձեռվ (այսինքն՝ առաջ նկարում ե, հետո անվանում):

Այնուհետև կերպարվեստը յերեխայի մոտ աստիճանաբար դառնում է պատկերով և յերեխան սկսում է առարկան (պատկերը) գիտակցաբար արտահայտել նկարում, ծեփվածքում և այլ նյութի վրա: Մտածում ե և ի կատար ածում մտածածը:

Այնուամենայնիվ այդ մինչերպարվեստային ժամանակաշրջանի (տարրական ուրվագիծ) առաջին աստիճանները զեռևս բոլորովին կատարելազործված չեն: Զի կարելի յերեխայից պահանջել, վոր նա լիովին նկարի. որինակ՝ մարդն իր բոլոր մանրամանություններով. նա տալիս ե միայն առարկայի մի քանի մասերը: Յերեխան, իհարկե, ավելի շատ գիտե, քան կարողանում է արտահայտել: Վաղաժամ քննադասությունը կործանիչ կերպով և ազգում մանկական ստեղծագործության վրա:

Սիեմատիկ ձեւակերպման մեջ հետզհետե սկսում են աճել մարդու պատկերի ձեւակերպման նշանները. յերեխան են գալիս բունը, ձեռքերը, շօրերը, գլխարկը և այլն (բարդ ուրվագիծ): Կանոնած դիրքը շարժողական ձեռք և ստանում—վոտքերի, դիմի շարժումներ և այլն: Յեթև առաջ առարկաները թղթի վրա ցաք ու ցրիվ ելին նկարվում, այժմ նկարվում են շարքով, հորիզոնական գծի վրա:

Այս ժամանակաշրջանի նկարների մեջ, վորպես որենք, դեռևս առարկաներին ծավալ, ստվեր, հեռամիջաբ տալու փորձեր շկան: Նախադպրոցականը նկարում է այնպես, ինչպես գիտե և վոչ այնպես, ինչպես տեսնում է: Նա դիմու, վոր յուրաքանչյուր առարկա ունի իր տեղը և ուրիշ առարկայի տեղը չի գրավում, վոր յեթե առարկան հեռացնենք, բոլորովին չի փոքրանա, նա

պիտե, վոր տան մեջ մարդիկ են ապրում, պետք ե նրանց նկարել. առացվում է թափանցիկ տուն և այլն: Սավերն առարկայի վրա պատահական, անկայուն յերեռյթ ե, առարկային չի պատկանում, այդ պատճառով ել նախադպրոցական յերեխան ստվերը ժեսում ե, չի նկարում:

Այն թեմատիկ առաջադրությունները, վոր կարելի յե առաջարկել մեծ քանակությամբ (5, 6 տարեկան յերեխաններին), յերեխայից պետք ե պահանջնեն հատուկ նկարչական ձևեր:

Նախադպրոցականի գեղարվեստական ըմբռնման հարցի մասին գրականության մեջ շատ քիչ տվյալներ կան. մենք կնշենք միայն նկարի ըմբռնման մասին տվյալները.

ա) յերեխանները դժվար են ըմբռնում այն առարկանները, վորոնք բնորոշ չեն: Որինակ՝ 5 տարեկան յերեխանները հետեւ կողմից նկարված շունը չեն ճանաչում.

բ) դժվար են ըմբռնում այն պատկերները, վորոնց վրա շատ առարկաններ են նկարված կամ առարկաններն իրար ծածկում են:

ց) առարկանների հեռանկարային փոքրացումը 3—4 տարեկանների համար անհասկանալի յե.

դ) ծավալային ստվերային պատկերացումը մինչև 7 տարեկան յերեխաններին չի բավարարում (ստվերը մնում է անհասկանալի. ըմբռնում են վորպես «կեղա», «կեղտու ե»).

ե) մերկ, սիսեմատիկ ձեւակերպումը, այսինքն՝ պարզ, քիչ քանակությամբ ցուցանիշներով նկարված առարկան թե մեծ և թե փոքր յերեխաններին չի բավարարում: Առարկայի մեջ յերեխանները ծանոթ մանրամասնություններ են փնտրում.

զ) յերեխաններին հուզում են մի շարք նկարիչների անորոշ կոնսուլ ունեցող նկարները (որինակ՝ նկարում են յերեխա, վորի գուլպանները սպիտակ են, սպիտակ փոնի վրա՝ առանց կոնսուլը):

է) կոնսուլային ձեւակերպումները (մի գծով, առանց ներկերի) յերեխաններին չեն գրավում: Սիլուետն ել նրանցից քչերին ե դուր գալիս: Յերեխանները գունեղ, ցայտուն և հուզական պատկերացումներ են պահանջում: Պետք ե այնպիսի նկար ընտրել, վորը լինի բավականաչափ ցայտուն, հուզող, բայց վորոշ, ուետ պատկեր տվող:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՅԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Միջավայրը չպետք ե անփոփոխ լինի: Միջավայրը պետք ե

յերեխայի ստեղծագործությանը խթան հանդիսանա : Ավելի տաղոկալի և անհեթեթ բան չկա , քան այն , վոր նախադպրոցական հիմնարկներում տարիներով աթոռները դրված են լինում միենույն տեղերում , և պատկերի վրա տարիներով կախված են լինում միենույն նկարը , վորը յերեխաները վաղուց արդեն չեն նկատում և այլն : Զափաղանց ոգտակար ե ժամանակ առ ժամանելու յերեխաների հետ կամ առանց յերեխաների խմբում տեղափոխություններ կատարել : Այս հանգամանքը յերեխաների ուշադրությունը թարմացնում է :

Մանկիմնարկի միջավայրը բաղմաղան պետք ել լինի : Կահագործան ալզատությունը յերեխաներին պասիվացնում է : Յերեխան ախուր ե . նա պետք ե վորեն տեղ ծախսի իր ենթգիտն :

Միջավայրը կազմակերպելիս և նյութի ընտրություն կատարելիս պետք ե Հաջորդականություն և հետեղականություն պահպանել : Նյութերի առատությունն ստեղծում և վտանգավոր ծանրաբեռնվածություն :

Նյութերի ընտրություն կատարելիս , պետք ե նկատի ունենալ հետեւյալ մոմենտները :

ա) Կարեոր ե վոչ միայն ձեերի , գույների քչությունը և յուրաքանչյուր ձեի պարզությունը , այլև այն փոխարարերությունը , վոր սուացվում և առանձին առարկաների , ձեերի , մեծությունների միջև , այսինքն՝ վորքան նրանք իրար հակադիր (կոնտրաստ) են , այնքան պարզ ու հեշտ են ըմբռնվում : Որինակ՝ մեծ խորանարդ և փոքր խորանարդ , ծավալ ունեցող խորանարդ—ձև և տափակ—փաներայից կտրած տախտակ և այլն :

բ) Ձեերի , առարկաների կրկնությունը , մանավանդ փոքրերի համար , անշրաժեց և , վորովհետև դա կողմնորոշումների և ունակությունների ամրացման ճանապարհն է : Բացի գրանից և կրկնված ձեերը , շնարարական և այլ կոնստրուկտիվ նյութի մեջ , ստեղծագործական կոնստրուկտացիայի միակ միջոցն են հանդիսանում (մի խորանարդով , մի աղյուսով վոչինչ չի կարելի անել) :

գ) Հեշտացնում և մանկան կողմնորոշումները՝ ձեերի , գույների կենսականությունը , այսինքն՝ յեթե նման ձեեր յերեխային կյանքից ծանոթ են :

դ) Կենցաղի մեջ յուրաքանչյուր առարկա պետք ել լինի—1) առողջապահական , 2) դորձածության համար հարմար , 3) ըմբռունելու համար մատչելի , 4) հստետիկ և 5) խնայողական :

Ենքը , առողջապահական բոլոր պահանջները բավարարելով հանդերձ , պետք ել լինի վոչ չատմեծ , և հարմար :

Այսեղնը , կահ-կարասին և այլ իրերը պետք ել յերեխաների հաստակին հարմարեցված լինեն , պետք ել լինեն հարմար , ձեռվ ու գույնով պարզ , եստետիկ :

Պետք ել խուսափել գույնով կահավորությունից . բայց ցայտուն գույների բացակայությունն ել ցանկալի չե : Վորքան առարկան փոքր ե , այնքան ավելի գունեղություն և պահանջում ե ընդհակառակը—մեծ տարածություն ունեցող առարկաներ պետք են ներկված լինեն հանգստացուցիչ գույներով : Յերեխաները սիրով և խնայողարար են վերաբերվում դեպի գունավոր ամանեղենը : Մանկապարտեզում պետք ել լինեն ցայտուն խաղակիքներ , գունավոր ամանեղեն , գունեղ գորգ և այլն : Մեծ տարածությունները — պատերը , պահարանները , կահ-կարասին ել պետք են ներկված լինեն :

Նկարները , պատկերները , Փոստ-նկարները մանկապարտեզում ոգտագործվում են լայն կերպով : Բացի 2—3 պատից կախված նկարներից , պետք ե ունենալ նաև կարտոնի վրա փակցված նկարներ , պետք ե կազմել փոքրիկ ալբոմներ , լայն կերպով ոգտագործել գիրքը , նկարը , լուսոն , խաղերը և այլն : Փոքր հասակի համար այս նյութերը պետք ե շատ քիչ լինեն : Նկարը պետք ե անպայման մատչելի լինի (թե՛ բովանդակությամբ և թե՛ ձեմովրման տեսակետից) և առաջին հերթին պետք ե համապատասխանի խմբի պլանային աշխատանքի առաջադրություններին : Բնդմին պետք ե տալ նաև կարմակերպող մոմենտների հետ կազչունեցող հարուստ , բազմազան , հուզական բովանդակություն ունեցող նկարներ (վատ չե , յեթե ձեեոր հիշեցնենք ամառվաճակին , հիշեցնենք ուրիշ յերկների մասին լսածները , սեղունային մոմենտի հետ տանք ինդուստրիալ և շինարարական առաջադրություններ և այլն) : Միանդամայն անհրաժեշտ է տալ նաև ուրախ , ծիծաղ առաջանող նկարներ և , վերջապես , դեկորատիվ նկարներ՝ առաջանակության—վրապես զարդարանք :

Յերեխաների գոգնոցները պետք ել լինեն բաց , ուրախ գույնի (արհեստանոցի համար կարող են ունենալ մուգ գույնի) :

Մանկապարտեզում պետք ե տիրի պարզություն , մաքրություն , ուրախություն :

Ներկայիս լայն միջավայրը կերպարվեստի աշխատանքների համար հարուստ նյութ ե տալիս : Եքսկուրսիաները և դիտողությունները կերպարվեստի աշխատանքների մշակման համար կարող են հարուստ բովանդակություն տալ : Այնուամենայնիվ , մենք հաճախ այդտի այդ չենք նկատում : Պատճառն եքսկուրսիաներ կատա-

բելու և մեթոդների մշակման մեջ է : Հիմնական սխալն այն է, վարմանկավարժն շտապում է : Եքսկուրսիաների ժամանակը մտնելու վարժութեան շտապում է . նա յեղափակումները տալիս է չոր, զժվարձեալ, իսկ յերեխաները տեսնում են վրգեորդ, համոզիչ իրականությունը : Պետք է թույլ տալ, վոր յերեխաները տեսնեն, դիտեն : Մանկավարժը պետք է դրդի յերեխաներին, վոր նրանք մերժեք դժուղություններ կատարեն :

Վորտեղ հնարավոր է, պետք ե այնպես անել, վոր յերեխան բացի տեսնելուց, ձևոք տա, համն առնի, փորձի, լսի և այլն : Բարբոնումը պետք ե լինի ակտիվ, պետք ե մորիլեղացիայի յենթարկել բոլո՞չ ըմբոնող որդանները : Վորքան պարզորոշ ե ըմբռումը և հուցականությամբ հաղեցված, այնքան ավելի նյութ կա գիտակցական մշակման համար, այնքան հեշտ ու հետաքրքրական կանցնի անալիզը և յեղափակումները կլինեն ամուր ու դորձնական :

ՅՈՒՅՍՈՒՆՔՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Տվյալ ծրագրերի միջոցով մենք ձգում ենք հարստացնել յերեխաների կերպարվեստական դորձունեյությունը՝ նոր նյութերով, աշխատանքի ձևերով և նոր տեխնիկական հնարավորությունների միջոցով, զարկ տալ նրանց ստեղծագործությունը :

Այս աշխատանքը կատարելու մեթոդիկան պետք է լավ մտածված լինի :

Անհրաժեշտ ե պահպանել հետեւյալ կանոնները .

ա) մանկավարժն առաջադրությունների վերաբերյալ աշխատանքներ պետք ե տա այն դեպքում, յերբ միանդամայն համոզված ե, վոր յերեխաները, տվյալ առաջադրության վերաբերյալ բավականաչափ պարզորոշ պատկերացումներ են կատարել .

բ) առաջադրությունների թեման պետք ե լինի լայն և հետաքրքրական, վորպեսզի յերեխաներն ստեղծագործական աշխատանքի լայն ասպարեզ ունենան .

գ) յուրաքանչյուր թեմայի համար անհրաժեշտ ե ընտրել համապատասխան նյութ և ձևակերպման միջոց . հաճախ աշխատանքը հաջողություն չի ունենում՝ վաստ նյութ ընտրելու պատճառով : Որինակ՝ եքսկուբսիա կատարելուց հետո, յերբ յերեխաները դիտել են մեծ տարածություններ, յերկինքը, ցայտուն գույներ և այլն, պետք ետալ գույներ և վոչ թե կոնստրուկտիվ նյութ, կամ թե դեպի ավտոմոբիլի զարածը կատարած եքսկուբսիայից հետո — թափթփուկ նյութեր և այլն .

դ) աշխատանքից առաջ պետք ե կենտրոնացնել յերեխաների

ուշագրությունը և համառոտ հուզական, պատկերավոր զրոյցով հետաքրքրել նրանց .

Ե) կերպարվեստի աշխատանքի պրոցեսում մանկավարժը կարող է հանդես գալ իր խորհուրդներով և տեխնիկական ոգնությամբ : Սակայն այդ ոգնությամբ նա չունեած ե խառնիվի յերեխաների ստեղծագործած պատկերներին . յերեխայի ինքնուրույնությունը կերպարվեստի աշխատանքի մեջ պետք ե հարդել և դաշտականել :

Փոքր հասակում կոլեկտիվ կերպարվեստի աշխատանքները ծագում են կառուցողական նյութի չուրչը, վորքանով այդ նյութը միացնում է կերպարվեստը և յերեխայի խաղը : Զպետք ե ձգտել, վոր, բացի դրանից, յերեխաներին ուրիշ կոլեկտիվ աշխատանքներ կատարեն : Այսուհետեւ միայն մի քանի կոլեկտիվ աշխատանքի մոմենտներ կարող են լինել : Արիստի տոների համար համապատասխան սենյակը զարդարելը, զրոշակներ կտրուկ ու կպցնելը և այլն, այլ պարզ, պատկերներ չպահանջող կերպարվեստական աշխատանքներ :

Կոլեկտիվ աշխատանքը միատեսակ հատուկ չէ բոլոր տիպերի նյութերին և բոլոր տեսակի աշխատանքներին : Կոնստրուկտիվ աշխատանքներն ավելի յեն նորմատում կոլեկտիվ աշխատանքներ կատարելուն, նկարչությունն ավելի քիչ : Բայց այսուհետեւ հնարավորություն կա յերեխաներին միացնելու կոլեկտիվ աշխատանքի համար :

Այս ծրագրով աշխատելիս անհրաժեշտ ե փոխ սոր փոխ կատարել զանազան տեսակի աշխատանքներ . որինակ՝ նկարչությունից հետո ծեփածք, ասպարինատուկտիվ աշխատանքներ և այլն : Հակառակ դեպքում յերեխայի ստեղծագործական ուժերը միարկողմանի կերպով կղարզանան և յերեխան անհրաժեշտ ունակություններ և կողմնորոշումներ չեն ստանա :

Ծրագրի նյութի համաձայն, յերեխաներին սիստեմատիկորեն կերպարվեստի դործունեյության մեջ առաջ քաշելը պետք ե կայանա վոչ թե միայն նյութի, աշխատանքի տեսակների և բովանդակության բարդացման, այլև կերպարվեստի տեխնիկայի մեջ :

Մանկավարժը նպաստում է կերպարվեստի տեխնիկայի զարգացմանը հետեւյալ կերպով .

Ստորին խմբում նյութերը կանոնավոր կերպով տալու և խաղաղ բանվրական միջամայր կազմակերպելու միջոցով : Բացի դրանից, կերպարվեստն ել առաջ տանելու համար, անհրաժեշտ և զարգացնել մանկան դիտողականությունը, սուպերկան, նրան ձեռ տեսնելու կարողությունը :

Այն դեպքում, յերբ բարձր խմբի յերեխան իր աշխատանքով, նկարով չի բավարարվում, լավ և ոգտագործել ընկերական քընհաղատությունը, բայց այդ քննադատությունը պետք է կատարվի վոչ թե գնահատության, այլ փոխադարձ ոգնության գծով: Վաղաժամ քննադատությունը կործանում է յերեխայի հավատը դեպի իր ուժերը և իջեցնում հետաքրքրությունը դեպի ստեղծագործական աշխատանքը:

Առանձին դժվար դեպքերում կարելի յէ յերեխային ցույց տալ առարկան կամ նրա նկարը գրքում:

Ծրագիրն ոգտագործելիս պետք է նկատի ունենալ, վոր նյութերը, բովանդակությունը, կողմնորոշումները, գիտելիքները և ունակությունները հետեւյալ խմբերում չենք կրկնում, այլ ցույց ենք տալիս լրացուցիչ կերպով: Իսկ յեթե բարձր խումբը նոր յերեխա մտնի, ապա նա պետք է ձեռք բերի բոլոր նախորդ խմբերի կողմնորոշումները, գիտելիքները և ունակությունները:

Ծրագրում ցույց տրված աշխատանքի բոլոր տեսակները և որինակելի թեմաները չի կարելի բոլորի համար պարտադիր համարել: Կարեռ և, վոր տվյալ պայմաններին, յերեխաների կազմի համաձայն, մանկավարժը ցուցաբերի իր սեփական նախաձեռնությունը և նշի աշխատանքի բովանդակությունը: Ծրագրային նյութը պետք է միայն ուղեցույց լինի, զարկ տա աշխատանքի նոր ձևերի և տա աշխատանքի պարզորոշ դրույթներ:

Կանոնավոր դրված աշխատանքի ցուցանիշներն են՝ յերեխան ների հետաքրքրությունը, ստեղծադորձական նախաձեռնության հարստությունը, կոլեկտիվ կերպով աշխատել կարողանալը, առաջադրությունները հաճույքով կատարելը:

Ծ Ր Ա Գ Ի Բ

ՍՏՈՐԻՆ ԽՈՇԽՈՅ

Նյութեր: Թուլքը — նկարչական, գունավոր (փայլուն), 6 տույնի կարմիր, կրապույտ, գեղին, կանաչ, սև, սպիտակ (գունավոր թղթերը արվում են աստիճանաբար):

Կողմնորոշումներ և գիտելիքների: Գիտենալ, վոր թուլքը կարելի յէ պատռել, տրորել, կտրել, կողնել: Կարողանալ տարբերել և անվանել հիշված 6 գույները (ատրվա վերջին):

Ունակություններ: Տարվա վերջին կարողանալ ողնել ղեկավարին՝ աշխատանքի համար թուլք պատրաստելիս: Ապահարանից հանել, յեզրերը ծալել (ծալելու գիծը նշում ե ղեկավարը), աշխատանքից հետո՝ սենյակը մաքրելիս ողնել: Մկրատով թուլք կարել, կողնել:

Յերեխաները պետք է կարողանան վրձինը խեժուա անել և այնպիս քսել, վոր աշխատանքը կեղտու չլինի:

Աշխատանքի բովանդակությունը: Թղթի վրա նկարել և կողցնել գունավոր թղթից կարտվածքներ (ապալիկացիա): Ազատ աշխատանքներ՝ առաջադրության համաձայն: որինակ՝ ողնեն ղեկավարին՝ խմբի սենյակը զարդարելիս, գունավոր թղթեր կտրտել և կողցնել զանազան ձևերով (յերեխաները կողցնում են համաձայն ղեկավարի ցուցումների): Յերեխաները կարող են ողնել ղեկավարին իրենց համար խաղալիքներ պատրաստելիս:

Նյութեր: Մատիտներ — հասարակ, կարմիր, կապույտ, կանաչ, գեղին, սպիտակ, սև: Խել:

Կողմնորոշումներ և գիտելիքներ: Գիտենալ, վոր մատիտները թղթի վրա հետք են թողնում, վոր չոր գույները գործածելիս պետք է բաց անել, վոր խեժով կարելի յէ թուլք կողցնել:

Տարրերել և վորոշել հիշված 6 գույները:

Ունակություններ: Տարվա վերջին կարողանալ կատարել զնամարտի մանր հանձնարարությունները. բաժակի մեջ գույն բաց անել, պատրաստի գույնը լցնել բաժակները: Նկարելիս մատիտը պինդ չսեղմել, մատիտը չիրծուել, մատիտով չթխթիւկացնել:

Գույներով նկարելիս ներկերը չփշացնել, այսինքն՝ մի գույնի մեջ թաթախիված վրձինը մյուս գույնի մեջ չընել, իսկ յեթե վրձինները քիչ են, վրձինը լվանալ, հետո ուրիշ գույնով նկարել:

Կերպարվեստի ունակություններ: Պրիմիտիվ սինեմա (տարվա վերջին):

Բայտ բովանդակության — առանձին առարկաներ:

Նյութ: Կավ:

Կողմնորոշումներ և գիտելիքներ: Գիտենալ, վոր չոր կավով ծեփել չի կարելի: Թաց կավը կարելի յէ հունցել և ծեփել:

Ծեփել չի կարելի: Ատրվա կավը կարողանալ սառցե բլուր չինել, ձյունի մեջ անցք բաց անել, ձյունե գունդ չինել:

Աշխատանքի բովանդակությունը: Ծեփել կավից (աղամա):

Աշխատանքի բովանդակությունը: Ծեփել կավից (աղամա):

Նյութ: Զյուն:

Կողմնորոշումներ և գիտելիքներ: Գիտենալ, վոր ձյունից կարելի յէ ծեփել, չենքեր չինել:

Ունակություններ: Կարողանալ սառցե բլուր չինել, ձյունի մեջ անցք բաց անել, ձյունե գունդ չինել:

Աշխատանքի բովանդակությունը: Ծեփել ձյունից, ձյունի չինել (աղամա աշխատանք):

Նյութ: Աղամ: Բահեր, զանազան չափսի արկղեր, տախտակեր, մազեր, մազեր, փայտե մուրճեր, ջուր:

Կողմնօրոշումներ և գիտելիքներ: Տես բնադիտության ծրագիրը:

Ունակություններ: Կարողանալ ավազի վրա կառուցել պարզ չենքը:

Աշխատամիտի բովանդակությունը: Խաղեր ավազով (աղատ):

ՄԻՋԻՆ ԽՈՒՄՐ

Եյութեր: Թուղթ: Բացի այն նյութեց, վոր նշված ե փոքրի ծրագրում, այստեղ ավելանում են փայլուն թուղթն ու ծիախոտաթուղթը՝ նարնջի և մանիչակաղույն: Փափուկ կարտոն:

Կողմնօրոշումներ և գիտելիքներ: Տարբերել կարտոնի հասանությունը, նկարելու և ծխախոտի թուղթը, վորոշել հիշված դույնի թղթերը:

Ունակություններ: Կարողանալ խմբի աշխատանքի համար թուղթ կտրուել, համաձայն ղեկավարի արած ծալվածքի:

Աերպարզեստի ունակություններ: Կարողանալ կարել ըրջան, չառակութի, յեռանկյուն, չերտ:

Չեռվ—պարզ սխեմա, աստիճանաբար բարդացող:

Բովանդակությամբ—առանձին առարկաներ և պարզ էռմպեր:

Աշխատամիտի բովանդակությունը: Թղթի վրա նկարել մատիտով, գույներով (անհատական, կոլեկտիվ, աշխատանքներ, առաջադրություններով և առանց առաջադրության):

Կազմակերպող մոմենտների բովանդակության համաձայն, գույներով թղթերի կտրտվածքներից կաղմել ալբոմներ. որինակ՝ «ինչպես սարքավորեցինք հողամասը ձմռան համար», «Լենինի մասին», «Կարմիր բանակը» և այլն:

Ալբոմները, պապկաները զարդարել նկարներով, պատկերներով (թղթերից, ժուրնալներից կտրտված), գույներով թղթերով:

Գույնի, ձեի, հաշվի վերաբերյալ լուսոներ պատրաստել և կացնել:

Գույնելոր կամ յերեխաների ներկած թուղթը ծալել և կտրտել (պատրաստել հասարակ ավելո-խաղալիք, փոռան, հոլ և այլն):

Ողնել մեծերին՝ տոների համար բուտաֆորիա, չորեր, գըլ-խարկներ պատրաստելու:

Կարտոնից և նկարչական թղթից շինել տափակ խաղալիքներ և ոպտազործել խաղալիքներ:

Եյուններ: Մատիտներ (նույնը, ինչ վոր ստորին խմբում):

Ներկեր. չոր և ներկարակի—կապույտ, նարնջի, մանիչակաղույններ: Սոսինձ և ինչ:

Կողմնօրոշումներ և գիտելիքներ: Գիտենալ, վոր գրաֆիտը կոտրվող ե, վոր ներկը պատրաստելուց առաջ պիտք ե մանրացնել, թե չե սոսինձի մեջ չի լուծվի, վոր սոսինձը գործ և ածվում ամրացնելու և ներկեր պատրաստելու համար:

Ունակություններ: Ներկեր պատրաստելիս կարողանալ սանդիք մեջ ներկեր ծեծել, մանրացնել և խառնել առանձին: Կարողանալ կանոնավոր կերպով վրձին գործածել, ա) կանոնավոր կերպով բռնել, թա) կանոնավոր կերպով թաթակել, գ) լվանալ վրձինը և սրբել: Դեկավարի ողնությամբ կարողանալ կարտոֆիլի ալյուրից սոսինձ յեկիւ: Սոսինձն այնպես քսել, վոր աշխատանքը չկեղաստի:

Աշխատամիտի բովանդակությունը: Նկարել մատիտով, ներկերով (անհատական և կոլեկտիվի աշխատանքներ, համաձայն առաջադրության և առանց առաջադրության): Կալից և փայտից պատրաստած աշխատանքները ներկել: Աղատ նկարչություն ըստ առաջադրության, մշակվող կազմակերպող մոմենտի կապակցությամբ:

ՇԵՆՔԸ ՊԱՐՊԱՐԵԼԸ:

Եյութեր: Կալ:

Կողմնօրոշումներ և գիտելիքներ: Գիտենալ, վոր թաց կավը ձկուն ե, վոր ծեփելու համար պատրաստ և այն ժամանակ, յերբ ձեռքին չի կալչում:

Ունակություններ: Կոլեկտիվ աշխատանքի ընթացքում նկատելուն առանձին մասերի վորհարերությունը:

Կարողանալ կալից և այլ նյութերից (տաշել, խխունջ, փայտի կտոր) կառուցվածքներ կատարել:

Աշխատամիտի բովանդակությունը: Ենկել կալից (աղատ, կոլեկտիվութեն, համաձայն առաջադրության, առանց առաջադրության): Աշխատանքները ներկել, խաղերի ժամանակ գործածել և նրանցով շինուել զարդարել:

Փայտե ձեկերի համեմատ (մեծ յերեխաների շինած) սոնատաներ պատրաստել, ներկել, խաղերի մեջ գործածել:

Կիսաչոր աղյուսը զործադրել խաղի մեջ, վորսես կառուցվական նյութ:

Եյութեր: Զյուն:

Կողմնօրոշումներ և գիտելիքներ: Գիտենալ, վոր ձյունից կարելի յեւ ծեփել (ատք յեղանակին), վոր ձյունը թիակով կարելի յեւ կտրել:

Ունակություններ : Կարողանալ պարզ կառուցվածքներ անել :

Աշխատանքի բովանդակությունը : Զյունից մարդ և կենդանիներ ծեփել ու ներկել : Զյունից չենքեր կառուցել : Փայտե ձեւերով (մեծերի շինած) ոռամենաներ պատրաստել :

Նյութ : Թափթփուկ նյութեր — կարտոնի, լուցկու տուփեր, թելի կոճեր, արտադրության ավելցուկներ — փայտի կտորներ, կարտոնի կտորներ, յերկաթալար, բնական նյութեր — տերմաներ, խթումներ և այլն :

Կողմնօրոշումներ և գիտելիքներ : Պատրաստի ձեւերի կողմնություն :

Ունակություններ : Կարողանալ պատրաստի ձեւերը նպատակահարմար կերպով գործադրել կատարելիք աշխատանքի համար :

Աշխատանքի բովանդակությունը : Նյութի կողմնորոշում : Պարզ առարկաների կառուցում — խաղալիքներ, շարժիչներ, չեռքեր, կենցաղային իրեր և այլն :

ԲԱՐՁՐ ԽՈԽՄԱ

Նյութ : Թուղթ—լրագրի, փաթթելու, գրելու (մյուս նյութերի մասին հիշատակված և նախորդ խմբերում) :

Կողմնօրոշումներ և գիտելիքներ : Տարբերել զանազան տեսակի թղթերի հաստությունը և ամրությունը. գիտենալ, վոր նկարչական թուղթը և կարտոնը դանդաղ են ջուր ծծում, խակ ծխախոտի թուղթը՝ արագ, վոր կարտոնից լույսը չի թափանցում, իսկ ծխախոտի թղթից՝ թափանցում է : Հիմնական և լրացրեցիչ գույշները :

Ունակություններ : Կարողանալ կատարելիք աշխատանքի համար թուղթ ընտրել : Խմբի աշխատանքի համար կարողանալ զանազան ձեփ և չափսի թուղթ կտրտել, նշել և կտրտել այնքան, վորքան հարկավոր և աշխատանքի համար :

Կերպարվեստի ունակություններ : Աչքի չափով կարողանալ կտրել քառակուսի, քառանկյուն, չերտ :

Չեռով—պարզ սխեմա : Բովանդակությամբ—վոչ միայն առանձին առարկաներ, այլև կապակցված թեմաներ : Չեռկերպել պարզ իրեն :

Աշխատանքի բովանդակությունը : Նկարչություն թղթի վրա, ապալիկացիա, ապալիկացիաներից ալբոմներ :

Պապկաների, ալբոմների յերեսը զարդարել գունավոր թղթով, նկարներով, թերթերից, ժուռնալներից կտրտած Փոտո-ֆոնտաժներով—համաձայն ալբոմի բովանդակության թեմա-

ների (մանկավարժը նախորդով պետք է ըստ ձեփ և ըստ դույնի ընորություն կատարի) :

Կախարանների (չորի, գործիքների, նյութերի և այլն) համար նշաններ պատրաստել :

Պատրաստել համախման-բացակայության ցուցակ (գունավոր) : Խմբի սենյակի, ակումբի, գործարանի չենքերի համար վարդարանք պատրաստել (Փոտոմոնտաժներ, պլակատներ) : Զարդարանքները կազմվում են տպագրված պլակատներից, Փոտոներանքները կազմվությամբ :

Մանկական նկարներից պատի թերթ կազմել : Կարտոնֆիլից, սետինից, խցանից պատրաստած շտամպներով թերթիկներ տպել :

Իրենց, կոլորատության մանկապարանիվ, հրապարակի համար պատրաստել լուսո, սեղանի խաղեր (որինակ՝ ժամացույց) :

Կարտոնից պատրաստել պարզ մեխանիզմով շարժական խաղալիքներ—ջրաղաց, մարդ, կենդանի, թռչուն, պատվոր անիվ, դարձիչներ և այլն (խաղալիքները շարժվում են թելի, լծակի և այլ միացումների միջոցով) :

Յերեխանների պատրաստած շարժական և անշարժ խաղալիքների միջացով կարդակերպել ստվերային թատրոն : Յերեխանների կազմած (զեկավարի ողությամբ) կամ գրականությունից վերցիկապատճեններին մատչելի սցենարիաներով ներկայացումներ տալ :

Հեղափոխական տոնների ձեռակերպման կազմակցությամբ պատրաստել զանազան տոնական (բեմական) շորեր, գլխարկներ՝ որինակ՝ նավասուու, ողաչվի, կարմիր բանակայինի և այլն, զանազան ապկությունների չորեր : Առողջապահական կամպանիայի կալակցությամբ, կարելի յև պատրաստել սանր, լիցաբան, ոճառ և այլն : Եքսկուրսիա գեղի գործարան կամ խաղալիքների արհեստանոց (պապյե-մաշեյի) : Պապյե-մաշեյի հասարակ աշխատանձներ, պատրաստել խաղալիքներ — կենդաններ, թռչուններ, մարդ : Տեկնիկների թատրոն :

Նյութ : Գունավոր մատիտներ : Ակլարելի, եմալի ներկեր—մնացածը տևս ստորին և միջին խմբերի ծրագիրը :

Սոսինձ : Բացի նախորդ խմբերում հիշտուկածներից, ավելացրում և ժելատին :

Ունակություններ և գիտելիքներ : Գիտենալ, վոր գրաՓիտը լինում և զանազան հատկության — փափուկ, պինդ : Գիտենալ, վոր յուրաքանչյուր տեսակի ներկ աշխատանքի համար առանձին

տեսակ և պատրաստվում։ չոր ներկը սոսնձի մեջ լուծվում է, յեթե լավ ծեծված է։ կոչութը չեն լուծվում։ Անիլինի ներկերը բացվում են ջրի մեջ։ վորքան ջուրը շատ լինի, այնքան գույնը բաց կլինի։ Գիտենալ, վոր մուգ սոսինձը պակասեցնում է ներկի դույնը, վոր յերկու գույնի ներկեր իրար հետ խառնելիս, մի նոր գույն է ստացվում։

Գիտենալ, վոր հյուսնի սոսինձը գործ և ածվում փայտի ամրացման համար, ալյուրի սոսինձը և գումմիարարիկը՝ թուղթ կպցնելու համար։

Ումակություններ։ Կարողանալ մատիով ծայրը հանել (ղեկավարի հսկողությամբ)։ Ղեկավարի հսկողությամբ և ողնությամբ ներկեր պատրաստել. վերցնել անհրաժեշտ քանակությամբ ներկ, սանդի մեջ ծեծել և խառնել առանձին։ Սոսնձաներկ գործածելուց հետո վրձինը լվանալ տաք ջրով, ակվարել գործածելուց հետո՝ սենյակի ջրով, եմալե ներկ գործածելուց հետո՝ նալթով։ Չորացնելու համար վրձինը դնել ծայրը գետի վեր։

Կերպարվեսի ունակություններ։ Աշխատանքի ժամանակի կարողանալ զանազան գույններ գործածել։ Գույներով և մատիտով աշխատելիս կարողանալ ողտագործել թուղթ և զանազան ձեր ու մեծության կարտոն։ Բատ ձեւ տալ ավելի բարդ սխեմա։ Բատ բովանդակության կարողանալ տալ վոչ թե միայն առանձին առարկաներ, այլև կապակցված թեմաներ (նկարներ)։ Կազմել առնամենաներ և նախշեր։ Կարողանալ նարնջի, կանաչ, մանիշակագույն, գարնագույն գույններ պատրաստել։

Աշխատանքի ժամանակ կարողանալ կանոնավոր կերպով սոսնձ գործածել և ղեկավարի ողնությամբ ու հսկողությամբ եկեղեցական պլիտայի կամ նալթավառի (կերոսինկայի) վրա սոսինձ յետին։

Աշխատանքի բովանդակություն։ Նկարչություն մատիտով, ներկերով (անհատապես և կուեկտիվ կերպով, համաձայն առաջադրության և առանց առաջադրության)։

Նկարներով կարելի յե զարդարել խմբի սենյակը, մանկապարտեղի շենքը, զործարանի ակումբը։ Կարելի յե կազմել պլակատներ՝ համաձայն կաղմակերպող մոմենտների թեմաների, կազմել պատի թերթ, վորսիս վորոշ ժամանակամիջինցի աշխատանքի հանրադրումար կամ վորտես անցկացրած կամպանիայի առիտացիա։

Կավից, կարտոնից, անպետք իրերից պատրաստած աշխա-

տանքները կարելի յե ներկել ներկարարի, եմալի կամ ուրիշ գույներով։

Դեպի տեքստի գործարանը կատարած եքոկուրսիայից հետո, կարելի յե արաֆարետի միջոցով կտորներ ներկել և տոնի բնմադրման համար չորեր պատրաստել։ Հիշատակված բոլոր աշխատանքների ժամանակակիցներին հնարավորություն տալ զանազան գույններ գործածել։

Նյուր։ Կավ։

Կալմարոշումներ և գիտելիքներ։ Գիտենալ, վոր կան զանազան տեսուի կավեր. ավազախառն կավից աղյուս ևն պատրաստում, իսկ մաքուր կավից՝ զանազան իրեր։

Ումակություններ։ Կարույրանալ հեշտ ու աղատ կերպով պատրացնել առարկաներ, մի խումբ առարկաներ, կոլեկտիվ աշխատանքի ժամանակ հաշվի առնել մասերի համաշտությունը, կարողանալ ներկել կավի աշխատանքները, լաք քսել։

Աշխատանքի բովանդակությունը։ Ծեփել—աղատ, անհատապես, կուեկտիվորեն, համաձայն առաջադրության, առանց առաջդրության, թրծել, պատրաստած իրերը ներկել, լաք քսել։

Եքսկուրսիա զետի բրուտանոց և խաղալիքների արհեստանոց։ Պատրաստած իրերը գործածել խաղերի ժամանակ, ուրիշ նյութերի հետ (մարդիկ, թռչուններ, կենդանիներ, շարժիչներ և այլն), իբրանելու, վոր խաղան «Կորոնտեսություն», «Կարմիք բանակ», «Գործարան» և այլն խաղեր։

Չորացրած կամ թրծած աղյուսն ընդունելով վորտես կառուցողական նյութ, կառուցել զանազան շենքեր (տուն, գործարան և այլն)։

Նյուր։ Զյուն։

Կալմարոշումներ և գիտելիքներ։ Գիտենալ, վոր սառուցն ստանում և այն ամանի ձեր, վորի մեջ ջուր ենք լցնում սառունելու համար։

Ումակություններ։ Կարողանալ պարզ շենքեր կառուցել, կուեկտիվ աշխատանքի ժամանակ հաշվի առնել մասերի համաշխատությունը։ Տալ կաղակցված թեմաներ՝ համաձայն բովանդակության։

Աշխատանքի բովանդակություն։ Աղատ խաղերի ժամանակ սպասագործելու համար ձյունից կառուցել մի շաքը շենքեր՝ փայտը գործածելով վորդես հիմք։ Զյունից ծեփել մարդ, թռչուն, կենդանի—խաղալու և բակը զարդարելու համար, և ներկել։

Զյունի շենքերի համար պատրաստել գունավոր սպակիներ

(ներկած սառուց): Զյունից զանազան գունավոր զարդեր պատրաստել (ջրի մեջ զնել փայտի, պարանի, յերկաթալարի կտորներ և սաղմնել) և դրանցով զարդարել շենքերը, ձնե բլուրը և այլն:
Նյութ: Կոնստրուկտիվ նյութ: Թափթափուկ նյութերը նույննեն, ինչ վոր միջին խմբում:

Բացի դրանից, թելի կոճ, ուետին, ճիլուզ:

Արտադրության մենադրդներ: Մեքենաների անպետք մասեր, փոքրիկ անիբներ, ճախարակներ, շարժիչի մասեր: Մոմլոթ, փայտի կտորներ, յերկաթալար, ծառի կեղև և այլն:

Բնական նյութեր: Ծառի կեղև, ճյուղեր, կաղին, չորացրած ծաղիկներ, ճղնոս, խխունջներ և այլն:

Կողմնորոշումներ և գիտելիքներ: Եքսկուրսիաների միջոցով յերեխանելու ստանում են պարզ մեքենաների շարժիչների կողմնում (ընդհանուր կառուցվածքի և մեքենաների հիմնական մասերի կողմնորոշում և այլն):

Կերպարվեստի ուսակություններ: Կարողանալ աշխատանքի համար նպատակահարժար կերպով ոգտագործել պատրաստի ձեերը: Զեռով՝ տալ պարզութաց սխեմա, կարողանալ պատրաստել շարժական խաղալիքներ՝ պարզ մեխանիզմով (թելի, Ծակի, ճախարակի միջոցով):

Կոլեկտիվ աշխատանքի ժամանակ հաշվի առնել մասերի համաչափությունը, մասնակցել մասերը հավաքելիս:

ԱՇԽԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Իրենց և չեփարկյալ չրագարակի յերեխաների համար պատրաստել խաղալիքներ՝ զանազան նյութերի համակցությունից (կենդանիներ, մարդիկ, կենցաղային իրեր, շենքեր, շարժիչներ, պարզ մեխանիզմ ունեցող մեքենաներ և այլն):


Թղթեց և կտորից պատրաստել կինոյի ժապավեն, վրան փակցնել մանկական նկարներ, լրագրերից և ժուռնալներից կտրտած նկարներ, Փոտոներ — զանազան թեմաների շուրջը: Որինակ՝ թուչունների պաշտպանություն, ինչպես ընտանիքում մանկան անկյուն կազմակերպել և դիմարձալի թեմաների շուրջը և այլն:

Պատրաստել մի քանի ուսումնական պարագաներ — հաշվելու, ձեռի, մեծության, նոտած խաղեր և այլն: Եքսկուրսիա դեպի դորձարան և խաղալիքների խանութ, արհեստանոց:

ՀՀ Ազգային գրադարան



NL0228784



50. 474

ԳՐԱԾ 75 ԿՈՂ.

Программа работ
дошкольных заведений
выпуск второй

Госиздат ССР Армении, Эреванъ 1984